# Քրիստոնյա Հայաստան

2011, ԱՊՐԻԼ Ա, ԹԻՎ 7 (339)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ



*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ Ավետման տոնի առիթով, եւ շնորհավորում կանանց՝ Մայրության եւ գեղեցկության օրվա կապակցությամբ:*

*Աշխարհի փրկության համար Քրիստոսի մարդեղացման հրեշտակաձայն ավետիսն ենք վերստին հիշում նվիրական այս տոնին, որ մեզ բերում է նաեւ հորդորը՝ Տիրամոր հեզ օրինակով աստվածային բարերար կամքին հնազանդվելու, Ավետարանի լույս պատգամներով ապրելու եւ գործելու:*

*Աստվածածնի նման խոնարհությամբ, առ Աստված հավատարմությամբ կանայք պիտի արդյունավորեն իրենց բացառիկ առաքելությունը՝ նոր սերունդ դաստիարակելու, ընտանեկան օրհնյալ հարկը սիրով եւ հոգատարությամբ զորացնելու, նաեւ ազգային-եկեղեցական մեր կյանքում իրենց կոչումը բարի գործունեությամբ արդյունավորելու: Ճշմարիտ գեղեցկությունը առաքինազարդ հոգում է կանանց ու մայրերի, ովքեր հավատքով եւ մարդկանց հանդեպ սիրով լեցուն օրհնյալ արգասիքներ են բերում ազգային մեր անդաստանում:*

*Թող սուրբ Աստվածածնի գթառատ բարեխոսությամբ Տերն օրհնի բոլոր կանանց եւ մայրերին, շնորհի արեւշատություն, երկնապարգեւ երջանկություն եւ պահի ու պահպանի ամենախնամ Իր Սուրբ Աջի հովանու ներքո:*

## Անմոռաց օր Գյումրիում

> *«Մարդու արժէքը երբեք իր ունեցածին մէջ չէ, այլ՝ իր տուածին մէջ»*
> *(Գարեգին Ա)*

Սերը բացարձակ նվիրում է, այն պահանջում է մարդասիրական եւ բարեգործական առաքինություն: Հայ Եկեղեցին՝ որպես գուրգուրող մայր իր զավակների համար, լավագույնս գիտակցում է իր առաքելությունը: Բարեգործությունը դարձրել է իր կարեւորագույն նպատակներից մեկը: Ահա այս անգամ նման նախաձեռնությամբ հանդես եկան Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ ԵՊՀ-ի աստվածաբանական ֆակուլտետի ուսխորհուրդները: Ի պատիվ ԳՀՃ-ի տեսչության եւ ԵՊՀ-ի աստվածաբանական ֆակուլտետի ուսխորհրդի նախագահի Աննա Մարմարյանի՝ նախաձեռնությունն ունեցավ դրական նշանակություն: Ապրիլի 3-ին երկու կրթական հաստատությունների համատեղ ծրագրերն իրականացնելու միտումով մեկնեցինք Գյումրու Ֆ. Նանսենի անվան երեխայախնամ գիշերօթիկ հաստատություն, ուր ապաստանել է սոցիալական ծանր կարգավիճակ ունեցող, ինչպես նաեւ ծնողական խնամքից ու հոգատարությունից զրկված շուրջ 80 երեխա: Այդ երեխաները լիարժեք անդամներն են մեր հասարակության եւ իրավունք ունեն ինչպես երջանիկ մանկության, այնպես էլ պատշաճ կրթության ու դաստիարակության, ինչո՞ւ չէ՝ հոգեւոր կրթության ու դաստիարակության՝ իրենց զարգացմանը զուգընթաց: Ի դեպ, այն բավական լավ հիմքերի վրա է դրված այս հաստատության մեջ:



Հենց մուտքի առջեւ մեծ ուրախությամբ դիմավորեցին հյուրերին: Տեսնելով մեզ՝ զարմանքով ու ուրախությամբ լցվեցին նրանց աչքերը: Մի նոր բարեկամություն էր ստեղծվում: Նախ ծանոթացանք նրանց կենցաղային պայմաններին, ապա բարձրացանք դահլիճ, ուր երեխաները ցուցադրեցին իրենց պատրաստած սքանչելի կատարումները: Այն հուզեց ներկաների սրտերը: Մանուկների աչքերի խորքում արտացոլված էին անբացատրելի կարոտն ու թախիծը: Նրանց ելույթներից տպավորված՝ բարեմաղթանքի խոսքեր հղեցին ԳՀՃ-ի Չ լսարանի սան Վարդան սրկ. Ասլանյանը եւ ԵՊՀ-ի աստվածաբանական ֆակուլտետի ուսանողուհի Լուսինե Ադամյանը: Շնորհակալական եւ երախտագիտության խոսքերով հանդես եկավ նաեւ հաստատության տնօրեն տիկին Կարապետյանը: Հյուրերը հրավիրվեցին միասնական ճաշի, որից հետո առիթ ստեղծվեց երեխաների հետ ի մոտո ծանոթանալու համար: Նրանք բազմաթիվ նվերների հետ միաժամանակ ստացան նաեւ հոգեւոր եւ բարոյական աջակցություն: Ջանացինք հնարավորինս թեթեւացնել նրանց տրտմությունը:

Վերջապես եկավ հրաժեշտի ու բաժանման տխուր պահը: Բոլորի հայացքներում ակնհայտ էր սպասումի ու կարոտի զգացումը: Նրանց եւ մեր հոգում անջինջ կմնան բարի հիշողությունները:

Որքան էլ երկար լիներ ճանապարհը, այնուամենայնիվ, օրը բովանդակալից էր յուրաքանչյուրի համար եւ լի հաճելի հիշողություններով:

*Լեւոն սրկ. ՀԱԽՎԵՐԴՅԱՆ*

**ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*6 ապրիլի*

### Հայ կանանց միջազգային միության անդամներին

Ս. Աստվածածնի տոնի նախօրեին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի գլխավորած՝ Հայ կանանց միջազգային միության անդամներին:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ ՀՀ Սփյուռքի նախարարը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց միության նպատակը եւ գործունեությունը՝ ի զորացումն ազգային արժեքների՝ դրանում մեծապես կարեւորելով Եկեղեցի-պետություն, Եկեղեցի-հասարակություն, Եկեղեցի-ընտանիք հարաբերությունների ամրապնդումը:



Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց միության անդամներին եւ շնորհավորեց նրանց առաջիկա տոնի առիթով՝ մաղթելով, որ հայ կինն իր լուսավոր կերպարով ու հոգու ջերմությամբ ամենուրեք գեղեցկացնի հայ կյանքը: *«Փառապանծ կերպար է կերտել հայ կինը պատմության մեջ իր արիությամբ, նվիրումով եւ հավատարմությամբ ազգային-հոգեւոր արժեքներին: Ուրախ ենք, որ այսօր եւս նույն դերակատարությունը փառքով ու պատվով տանում է հայ կինը՝ թե՛ Հայրենիքում եւ թե՛ Սփյուռքում»*,- նշեց Նորին Սրբությունը:

Անդրադառնալով Ավետման եւ Մայրության տոների խորհրդին՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ դրանք արտահայտությունն են այն ջերմ զգացումների եւ գիտակցության, որ հայ մարդն ունի հանդեպ հայ կինը, նրա կարեւոր առաքելությանը ազգային կյանքում:

Նորին Սրբությունը խոսեց նաեւ Եկեղեցի-ընտանիք կարեւոր կապի մասին՝ նշելով, որ Եկեղեցու, հոգեւոր արժեքների հանդեպ ընտանիքի կնոջ եւ մոր կեցվածքով է մեծապես պայմանավորվում հասարակության մեջ բարեփոխումները դեպի բարին, աստվածօրհնյալ եւ աստվածահաճո կյանքը:

Միության անդամներն իրենց հերթին կարեւորեցին Եկեղեցու դերակատարությունը հայ ընտանիքի ամրության գործում, պատրաստակամություն հայտնեցին զորակցել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ տարբեր ծրագրերում:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց միության անդամների հարցերին՝ հասարակությանը հուզող տարբեր խնդիրների առնչությամբ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# Ո՞ՒՐ Է, ՄԱ՛Հ, ՔՈ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆԸ, Ո՞ՒՐ Է, ԳԵՐԵԶՄԱ՛Ն, ՔՈ ԽԱՅԹՈՑԸ...



Հավատո կամ Նիկիական Հանգանակը (Հավատամքը), որը քրիստոնեական հավատի, նրա ողջ դավանության հակիրճ շարադրանքն է, պարտավոր է իմանալ իրեն քրիստոնյա համարող յուրաքանչյուր մարդ: Հավատամքը պաշտոնապես ընդունում եւ խոստովանում են բոլոր քրիստոնեական Եկեղեցիները: Այն սուրբ Պատարագի անհրաժեշտ մասն է կազմում՝ հաջորդելով Ավետարանի ընթերցումին:

Անսխալ ձեւակերպված եւ սրբագործված դավանական ճշմարտությունների շարքում իր ուրույն տեղն ունի համընդհանուր հարության անխախտ հավատը. «Հավատում ենք մեռելների հարությանը, հոգիների եւ մարմինների հավիտենական դատաստանին, Երկնքի արքայությանը եւ հավիտենական կյանքին»: Քրիստոնեական հավատքն անմահության՝ Քրիստոսի հարության իրողության վրա հիմնված եւ մարդուն հավիտենականություն առաջնորդող հավատ է: Քրիստոսի հարությունը քրիստոնեության սիրտն է, քրիստոնեական հավատքի հիմքն ու էությունը: Առանց հարության՝ չկա քրիստոնեություն: Քրիստոնեությունը կյանքի կրոն է, քանի որ «Աստված մեռելների Աստվածը չէ, այլ՝ ողջերի» (Ղուկ. Ի 37): Ուստի պատահական չէ, որ Քրիստոսի հարության լուսավոր տոնը ամենից սիրելին է տաղավար տոների մեջ: Քրիստոսի հարությունը մանրամասնորեն նկարագրվում է Ավետարաններում (Մատթ. ԻԸ 1-8, Մարկ. ԺԶ 1-8, Ղուկ. ԻԴ 1-12, Հովհ. Ի 1-20): Աստծո Միածին Որդին մեղավոր մարդկության փրկության համար հանձն առավ խաչի անարգ ու ստորացուցիչ մահը, ճաշակեց չարչարանքների ու մահվան ողջ դառնությունը, թաղվեց եւ գերեզման դրվեց, սակայն, ինչպես եւ խոստացել էր Իր հետեւորդներին, երրորդ օրը հրաշափառապես հարություն առավ մեռելներից՝ մեզ հարության հույսը պարգեւելով: Քրիստոսն Իր մահվամբ եւ հրաշափառ հարությամբ հաղթեց մահվանը, խաղք ու խայտառակ արեց սատանային, որը մարդկանց կորստյան էր մատնում ամենակուլ դժոխքում: Քրիստոսի սոսկալի չարչարանքներով մեր հոգիներն ազատագրվեցին դժոխքից, քանզի, ինչպես ասում են Եկեղեցու սուրբ հայրերը, մեռելներից հարություն առնելով՝ Քրիստոսը իջավ դժոխք եւ ավերեց այն...

Մինչ Քրիստոսը՝ անկյալ մարդկությունը գտնվում էր ողորմելի ու ողբալի վիճակում, քանզի մահը համարվում էր չարիքների չարիքը, մարդկային խղճուկ կյանքի անհույս ու անլույս վերջակետը: Դարեր շարունակ մահվան ու գերեզմանի վախը ճնշել ու տանջել է մարդկային գիտակցությունը, կսկիծ պատճառել մարդու սրտին, այն մարդու, ում Աստված անմահության համար էր ստեղծել՝ անմահ հոգի շնորհելով: Գուցե այս էր պատճառը, որ չնայած այս ամենին, աստվածապատկեր մարդն իր հոգու խորքում միշտ փայփայել է անմահության գաղափարը, հավերժության ձգտումը, որը սակայն եղել է անհաստատ ու անկատար: Մարդ էակի հարության մասին ակնարկներ կան դեռեւս Հին Ուխտի մի շարք գրքերում: Հիշենք Մակաբայեցիների երկրորդ գրքից այն դրվագը, երբ Հուդա Մակաբայեցին, ունենալով պատերազմում ընկած իր ազգակիցների հարության ակնկալությունը, աղոթում էր նրանց համար, քանզի «եթե պատերազմում ընկածների հարության ակնկալություն չունենար, զուր կլիներ մեռելների համար աղոթք մատուցելը» (Բ Մակաբ. ԺԲ 44-45): Ուշագրավ է նաեւ նույն գրքի 7-րդ գլխում նկարագրվող յոթ եղբայրների եւ նրանց մոր նահատակությունը: Քաջասիրտ մայրը, տեսնելով իր յոթ որդիների նահատակությունը, եւ ինքն էլ նահատակվելով՝ խոստովանում է, որ հավատում է, որ «Արարիչ Աստված Իր ողորմությամբ ու գալստյամբ իրենց կյանքն ու հոգին վերստին պիտի վերադարձնի իրենց» (տե՛ս Բ Մակաբ. Է 23): Հոբը նույնպես իր անպատմելի ցավերի ու տառապանքների մեջ մխիթարվում էր նույն՝ հարության հավատով՝ ասելով. «Գիտեմ, որ հավերժական է Նա, Ով երկրի վրա պիտի փրկի ինձ՝ հարություն տալով մարմնիս» (Հոբ ԺԹ 25-26):

Հիշյալ հատվածները մեկ անգամ եւս փաստում են, որ մարդը երբեւէ չի կարողացել հաշտվել մահվան գոյության հետ, միշտ էլ հավատացել է հոգու անմահությանն ու մեռելներից վերստին հառնելուն: Վերջապես մարդու կյանքն այլեւս չի վերջանում մահվամբ: Քրիստոսը հարություն առավ մեռելներից, փրկեց մարդուն մահվան ու սատանայի ճիրաններից: Նա եղավ անդրանիկը մեռելների միջից, հաղթեց մահվանը, ինչպես հարության շարականում է ասվում. «Մահուամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբն յուրով մեզ զկեանս պարգեւեաց»: Ուստի Քրիստոսի հարությանը հավատացող մարդու համար մահն այլեւս սարսափելի չէ: «Ես իսկ եմ հարություն եւ կյանք. ով հավատում է Ինձ, թեպետ եւ մեռնի, կապրի... »,- ասում է աշխարհի Փրկիչը (Հովհ. ԺԱ 25): Անմահ հոգի ունեցող մարդը կոչված է անմահության հավիտենականության մեջ: «Եթե հավատում ենք, թե Հիսուսը մեռավ եւ հարություն առավ, այդպես էլ Աստված Հիսուսի միջոցով ննջեցյալներին ետ կյանքի պիտի բերի Նրա հետ» (Ա Թեսաղ. Դ 13): Հովհաննու Ավետարանում Տերը հստակ ասում է. «Կգա ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կլսեն Աստծու Որդու ձայնը եւ դուրս կգան. ովքեր բարի գործեր են արել՝ կյանքի հարության համար, իսկ ովքեր չար գործեր են արել՝ դատաստանի հարության համար» (Հովհ. Ե 28-29): Անիմաստ ու աննպատակ կլինի Քրիստոսի հարության հանդեպ մեր հավատը, եթե չհավատանք համընդհանուր հարությանը, որը լինելու է աշխարհի վախճանին, երբ Տերը գա՝ դատելու մարդկությանը: Այս մասին բազում վկայություններ կան Աստվածաշնչում: Հիշենք Հին Ուխտում հիշատակվող համընդհանուր հարության ամենապատկերավոր ու խորախորհուրդ օրինակներից մեկը Եզեկիելի մարգարեությունից, որն առանց սարսռալու հնարավոր չէ ընթերցել: Աստված Եզեկիել մարգարեին դնում է մարդկանց՝ չորացած ոսկորներով լի մի դաշտի մեջ՝ հրամայելով մարգարեանալ դրանց վրա, որպեսզի կենդանանան... «Ու երբ մարգարեացա, մի ձայն լսեցի. հետո շարժում եղավ. եւ ոսկորը ոսկորի հետ միացավ բոլոր հոդերին...

*Շարունակությունը՝ էջ 4*

## Ուխտագնացություն Վոլգոգրադի Ս. Գեւորգ եկեղեցի

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանի օրհնությամբ՝ Աստրախանի Ս. Հռիփսիմե եկեղեցու «Գեղարդ» երիտասարդաց միության անդամները՝ հոգեւոր հովիվ Տ. Սեբեոս քհն. Ղալաչյանի ուղեկցությամբ, մարտի 5-ի երեկոյան՝ Բուն Բարեկենդանի նախօրյակին, ուխտի գնացին Վոլգոգրադի Սբ Գեւորգ եկեղեցի:

Եկեղեցում միասնական աղոթքից հետո ցուցադրվեց ռեժիսոր Էդգար Բաղդասարյանի «Արարատից մինչեւ Սիոն» ֆիլմը: Տ. Մաղաքիան եւ Տ. Սեբեոսը մեկնաբանեցին ֆիլմից որոշ դրվագներ եւ պատասխանեցին երիտասարդների հարցերին:

Մարտի 6-ի առավոտյան Վոլգոգրադի եւ Աստրախանի երիտասարդները, ինչպես նաեւ բազում հավատացյալներ մասնակցեցին Բուն Բարեկենդանի տոնական Պատարագին:

Երիտասարդներն այդ օրը ստացան հոգեւոր հովիվների օրհնությունը՝ Մեծ պահքի շրջան մտնելու համար:

Տեր Մաղաքիայի խոսքով՝ նման ուխտագնացություններն ամրապնդում են երիտասարդների մեջ սերն ու հավատքն առ Աստված եւ հաղորդակից դարձնում քրիստոնեական ու ազգային մեր արժեքներին, ինչպես նաեւ աջակցում թեմական ծխերի երիտասարդական միությունների շփմանն ու համախմբմանը Հայ Եկեղեցու շուրջ, օգնում հայ երիտասարդին հավատարիմ մնալ նախնյաց հավատքին եւ ծառայել Մայր Եկեղեցուն:

## Սանկտ Պետերբուրգում բացվեց ցուցահանդես՝ «Հայաստան. մոտ եւ հեռու» խորագրով



Մարտի 10-ին Սանկտ Պետերբուրգի Կրոնի պատմության թանգարանում բացվեց «Հայաստան. մոտ եւ հեռու» խորագրով ցուցահանդեսը՝ Սանկտ Պետերբուրգի Հայ Առաքելական Եկեղեցու, ՌԴ մշակույթի նախարարության Կրոնի պատմության պետական թանգարանի եւ Հայ ազգային մշակութային ինքնավարության համատեղ ջանքերով: Այս թանգարանում վերջին 70 տարվա ընթացքում առաջին անգամ է կազմակերպվում ցուցահանդես՝ ամբողջովին նվիրված Հայ Եկեղեցուն: 18-20-րդ դարի շուրջ 120 նմուշ էր ներկայացված Մոսկվայի եւ Սանկտ Պետերբուրգի հայկական եկեղեցիներից: Ցուցադրվեցին նաեւ սրբապատկերներ, գեղանկարներ, ձեռագիր արձանագրություններ, եկեղեցական սպասք եւ հանդերձանք, հոգեւորականների գրառումներ, գրքեր, արխիվային փաստաթղթեր: Ցուցահանդեսում ներկայացված էին նաեւ Իվան Դեմենտեւսկու (նա երկու տարի ճանապարհորդել է Հայաստանում) լուսանկարչական աշխատանքները, որոնք պատկերում էին Հայաստանի սրբավայրերը, եկեղեցիներն ու եկեղեցական արարողությունները:

## Վոլոկոլամսկի մետրոպոլիտ Իլարիոն Ալֆեեւը հանդիպեց Մոսկվայի հայ եկեղեցասեր երիտասարդների հետ

Տ. Եզրաս եպս Ներսիսյանի հրավերով Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի նախագահ, Վոլոկոլամսկի մետրոպոլիտ Իլարիոն Ալֆեեւը մարտի 29-ին «Հայորդյաց տուն» հայեցի դաստիարակության կենտրոնում հանդիպեց «Նուռ» եկեղեցասեր երիտասարդաց միության անդամների հետ: Երկու առաջնորդների հետ հանդիպումը՝ նվիրված միջքրիստոնեական հարաբերությունների առաջընթացին, սկսվեց Տերունական աղոթքով, ողջույնի ջերմ ու շնորհակալական խոսքերով:

Մետրոպոլիտ Իլարիոն Ալֆեեւը ներկաներին փոխանցեց նաեւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Կիրիլ Ա-ի օրհնությունն ու ողջույնը: Սրբազան հայրը պատմեց Հայաստան կատարած իր մի քանի այցելության տպավորությունների մասին: «Ինձ համար շատ հարազատ ու թանկ է Հայաստանը: Այն, ինչ ես տեսել եմ Հայաստանում, մեծ տպավորություն է գործել ինձ վրա եւ միշտ կմնա իմ սրտում: Շատ տառապանքներ է տեսել հայ ժողովուրդը եւ տառապել է հատկապես իր քրիստոնեական հավատքի համար: Սակայն, ի հեճուկս ճակատագրի, հայ ժողովուրդն ամուր է պահել եւ շարունակում է պահպանել իր հավատքը»,- ասաց սրբազան հայրը:

Վոլոկոլամսկի մետրոպոլիտ Իլարիոնը խոսեց նաեւ Ռուս Ուղղափառ եւ Հայ Առաքելական Եկեղեցիների դարավոր կապի մասին՝ միաժամանակ նշելով, որ մեր Եկեղեցիների միջեւ գոյություն ունի տարակարծություն, որը սկիզբ է առել 451 թվականին եւ մինչ օրս հաղթահարված չէ: «Չնայած աստվածաբանական տարաձայնությանը, որն այսօր քննարկում են Ուղղափառ Եկեղեցիները եւ Արեւելյան Հին Ուղղափառ Եկեղեցիները,- ասաց սրբազան հայրը,- մենք միմյանց նկատմամբ տրամադրված ենք բարյացակամ, որը բազմիցս փաստել ենք գործով՝ համատեղ մեր պատմության ընթացքում: Այսօր էլ մեր Եկեղեցիների հոգեւոր առաջնորդները պարբերաբար հանդիպում են, շփվում, օգնում միմյանց՝ լուծելու այն խնդիրները, որոնք ծառացած են այսօր մեր առաջ»:



Մետրոպոլիտ Իլարիոնը պատասխանեց նաեւ երիտասարդների հարցերին: Հանդիպման ավարտին Տ. Եզրաս եպս Ներսիսյանը մետրոպոլիտ Իլարիոնին նվիրեց «Գրիգոր Նարեկացին եւ հոգեւոր մշակույթը միջնադարում» գիրքը եւ զատկական ձու, որի ներսում ռուսական եկեղեցու քանդակն էր: Մետրոպոլիտ Իլարիոնը կենտրոնի գրադարանին նվիրեց իր հեղինակած «Ուղղափառություն» երկհատոր գիրքը:

*Ալվարդ ՆԱԶԱՐՅԱՆ*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՀԱԿՈԲ Դ ՋՈՒՂԱՅԵՑԻ (1655-1680)

*Սկիզբը՝ 2010-ի թիվ 22-24, 2011-ի թիվ1-6*

Երեւանում ջորիները կատարելուց հետո Հակոբ կաթողիկոսն անցավ Էջմիածին եւ այնտեղ մնաց մինչեւ 1678 թիվը: Զբաղվեց մատակարարությամբ ու շինական գործունեությամբ: Նրա սիրտը բեկբեկվում էր՝ տեսնելով Հայոց Եկեղեցու ներհակությունը, տրոհվածությունը: Այդ շրջանում Աղթամարի կաթողիկոսությունը շարունակում էր իր անշուք գոյությունը: Իբրեւ կաթողիկոս՝ հիշվում են Բաղդասարն ու կարապետ Քռնածը, որոնց հաջորդում է Մարտիրոս Մոկացին, որը Նանենց գյուղից էր՝ Գուռճի ընտանիքից: Նրա մականունը Փշրուկ էր: Սրա օրոք մոկացիները եւ շատախցիները գժտվեցին իրար հետ, եւ Շատախի իշխան Եգդինշերն իր գավառը հայտարարեց Էջմիածնի թեմ: Նա Հակոբ կաթողիկոսից խնդրեց կաթողիկոսացու, իսկ նա էլ մեկին ուղարկեց, որի անունը մեզ չի հասել: Թերեւս այդ պատճառով էլ Ոսկանն Աղթամարը մտցրել էր Էջմիածնի թեմերի մեջ՝ որպես արքեպիսկոպոսություն: Սակայն Մարտիրոսը թույլ չի տալիս այդ բաժանումը: Նա գալիս է Շատախ եւ տեղի կուսակալի օգնությամբ Շատախն իրեն է ենթարկում: Շատախի հետ միացան նաեւ Վանը, Բերկրին, Արճեշը, Խլաթը, Բաղեշը, Մուշը, Խոշաբը: Եվ մինչեւ Ամիդ հովվապետելու համար սուլթան Մահմուդից հրովարտակ է ստանում: Հակոբ կաթողիկոսը կարողացավ նոր հրովարտակով թեմերը ետ առնել եւ տալ Վանի առաջնորդ Պողոս վարդապետին՝ իբրեւ Վարագավանքի վիճակ՝ առանց հիշելու Էջմիածնի անունը, քանի որ օսմանյան եւ պարսկական տերությունները թշնամական հարաբերությունների մեջ էին: Հակոբը համաձայնեց Մարտիրոսին եւ Աղթամարի կուսակալ Աբդուլլահ Չելեբիին վճարել նրանց պահանջած գումարը՝ որպես հատուցում իրենց ծախսերի: Մարտիրոսը դրանից հետո նոր փորձեր չարեց եւ մահացավ 1663-ին:

Մարտիրոսից հետո կաթողիկոս դարձան ոմն Բաղդասարը եւ ոմն Ստեփանոսը եւ Մարկոս Արճիշեցին՝ Բլուրմակ գյուղից: Վերջինիս հաջորդեց Հովհաննես Թութունչին, որ մինչ այդ եղել էր Կ. Պոլսի պատրիարք: Երկրորդ անգամ զրկվելով պատրիարքությունից՝ նա հույսը կորցրեց Կ. Պոլսում հաջողության հասնելուց, ուստի վերադարձավ իր հայրենի Վասպուրական, որտեղ 1667-ին դարձավ Աղթամարի կաթողիկոս եւ հովվապետեց 14 տարի: Պատմությունը Հովհաննես Թութունչու գործունեության այս շրջանի վերաբերյալ հիշատակներ չի պահպանել: Հայտնի չէ, թե ինչպիսին էին նրա հարաբերությունները Հակոբ կաթողիկոսի հետ, եւ ինչպես էին կատարվում Էջմիածնի վճարումները:

Արդ, տեսնենք, թե ինչպես էին գործերը Կիլիկիայում եւ Երուսաղեմում: Ասվեց, որ Կիլիկիայի կաթողիկոսությունը երկատված էր, եւ հովվապետում էին Խաչատուր Սեբաստացին ու Դավիթ Բերիացին կամ Կարկառեցին: Նրանք երկուսն էլ մահացան 1679 թվին: Նրանց մահից հետո էլ բաժանումը շարունակվեց: Խաչատուրին փոխարինեց Սահակ Մեյխանեջին, իսկ Դավթին՝ Ազարիա Կարկառեցին:

Երուսաղեմում 1671-ից ի վեր պատրիարք էր Եղիազար Այնթապցին: Նա պահել էր նաեւ կաթողիկոսությունը: Այլեւ ու-



ժեռ հակառակորդներ չուներ, քանի որ Մարտիրոս Կաֆացին իր համար եկամուտ ստանալու յուրօրինակ ձեւ էր գտել Կ. Պոլսում, ինչպես վերն ասվեց: Սակայն սուրբ վայրերում հայերի դեմ ոտնձգությունները չէին դադարել: Եղիազարի օրոք էլ դատեր վարվեցին Սբ Հրեշտակապետի պատի, Բեթղեհեմի եկեղեցու, Բեթղեհեմի գերեզմանատան, Սբ Փրկչի գերեզմանոցի եւ Սբ Հարության դռնապանների պահանջմունքների համար, որոնք միշտ հայերի օգտին ավարտվեցին՝ շնորհիվ թե՛ ընդհանուր ազդեցության եւ թե՛ Եղիազարի հարստության ու Խաչատուր եպիսկոպոսի ճարպիկ ու հմուտ գործունեության: Նա էր որպես դատապաշտպան հանդես գալիս դատարաններում: 1676 թվի հունվարի 25-ին արքունական հրովարտակով Սբ Գերեզմանի խնդիրն էլ լուծվեց: Լատինների պահանջները մերժվեցին, եւ ճանաչվեց դրա պահպանության՝ հույների իրավունքը՝ բանալիներով, գույքով ու կանթեղներով:

Լավ չէին գործերը լեհահայության շրջանում: Հակոբ կաթողիկոսի նվիրակ Պողոս Եվդոկացի վարդապետին վտարելուց հետո՝ 1665 թվի հոկտեմբերի 29-ին, Կղեմես Գալանոսը եւ Ալսիգիոս Փիթուն ամբողջ ուժով ձեռնամուխ եղան լեհահայերի կաթոլիկացմանը: Վարժարանն ավարտածներին նրանք ձեռնադրում էին քահանաներ ու դարձնում իրենց կամակատարները, քանի որ հին քահանաները դեմ էին փոփոխություններին: Շատ հաճախ նրանք առիթից օգտվում էին՝ դրանք թոթափելու համար: Նրանցից էին Ցազլովիցի Ներսես նախանդամ երեցը եւ Արեւելքում ձեռնադրված լեհահայ երկու քահանա՝ Հովհաննես Բեռնարդովիչը եւ էլի մեկը, որի անունը մեզ չի հասել: Սրանք էլ, ի վերջո, ստիպված էին առերես հպատակվել Գալանոսին: Իսկ Նիկոլը միշտ իր երկդիմի վարքագիծը շարունակում էր՝ սկզբում դիմադրություն ցույց տալով լատինամետ փոփոխություններին, որ ժողովուրդն իրենից չհեռանա, իսկ վերջում համակերպություն էր ցույց տալիս: Փիթուն նրան լավ էր ճանաչել ու ասում էր, թե իրենց գործը հաջողվում էր, քանի որ Նիկոլը երկու հարյուր դահեկան թոշակի համար ամեն ինչի պատրաստ էր: Հակոբ կաթողիկոսը նոր նվիրակ ուղարկեց Լեհաստան՝ կամենալով լեհահայերին պահել հայկական դավանության, սակայն նվիրակի ջանքերն ի չիք դարձան: Ճիշտ այդ ժամանակ՝ 1666 թ. մայիսի 14-ին, 56 տարեկան հասակում մեռնում է Գալանոսը եւ թաղվում Լվովի հայոց Մայր եկեղեցում: Նա ընդամենը 26 տարեկան էր, երբ ուղարկվեց Վրաստան, եւ 30 տարեկան, երբ սկսեց աշխատել Կ. Պոլսի հայերի շրջանում: Դրանից քիչ առաջ մեռել էր Բոնավենդուրա աշխատավոր եղբայրը, եւ ասպարեզը մնացել էր Փիթունին, որը փոխարինեց Գալանոսին: Նա ընդամենը 28 տարեկան էր՝ առանձնապես չկրթված, բայց ուժեղ ճարտասան: Փիթուն իրեն դրեց Լվովի լատին արքեպիսկոպոսի եւ Լեհաստանի պապական նվիրակի տրամադրության տակ, որով կարողացավ Նիկոլի պահանջների դեմն առնել: Նրան աջակից էր Հովհաննես Կերիմովիչ հայ եպիսկոպոսը, որը Նիկոլի քրոջ ամուսնու եղբայրն էր եւ նրա փոխանորդությունն էր վարում:

*Շարունակությունը՝ էջ 4*

# ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԸ



Այս տարի նշվում է Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1650-ամյակը: Հայաստանի ազգային գրադարանն այս առթիվ «Մաշտոց» կրթամշակութային կենտրոնի հետ համատեղ ուխտագնացություն էր կազմակերպել Օշական՝ մեծ ուսուցչապետի շիրիմին: Ուխտագնացության մասնակից մտավորականներն իրենց խոնարհումն ու խնկարկումն էին բերել Մեծն Մաշտոցին: Օշականում միջոցառումն սկսվեց Տ. Գարեգին քհն. Արսենյանի օրհնությամբ: Իսկ Արման սրկ. Ահարոնյանը ներկայացրեց «Մաշտոց» կրթամշակութային կենտրոնը, նրա հրատարակած «Մաշտոց» հանդեսը: Հանդեսի գիտական խմբագիր Կարո Վարդանյանը խորհուրդ է համարում հենց Օշականում միջոցառումների մեկնարկելը, քանզի Մաշտոցը ոչ թե որդիական, այլ հայրական իրավունքներ ունի մեր ազգի պատմության մեջ: Նկատի ունենալով հայ կրթամշակութային ու գրահրատարակչական կյանքում եւ մարդու իրավունքների պաշտպանության գործում ներդրած վաստակը, ինչպես նաեւ «Մաշտոց» հանդեսի հրատարակման գործին աջակցություն ցուցաբերելը, «Մաշտոց» կրթամշակութային կենտրոնի նախագահության որոշմամբ հինգ մտավորականի՝ գրող, հրապարակախոս, Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանին, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Մանեւին, Հայաստանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի գեղարվեստի ֆակուլտետի դեկան Լեմս Ներսիսյանին, բանաստեղծ, գրականագետ, Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանին, «Վանատուր» ՍՊԸ հիմնադիր նախագահ Մերուժան Իգիթյանին, հանձնվեց «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջին» մեդալ:

Օրվա բանախոս-մրցանակակիրները մեծարեցին Մաշտոցին՝ նրան անվանելով ամենամեծ հայը, ում անվան հետ է կապվում մեր ազգային արժանապատվությունը, հայ լինելու ինքնագիտակցությունը: Մրցանակ ստացողներին շնորհավորեցին գրողներ Վալտեր Թորոսյանը, Սամվել Խալաթյանը, դերասան Ջիվան Սարգսյանը:

Տոնին նվիրված միջոցառում տեղի ունեցավ նաեւ Հայաստանի ազգային գրադարանում, որի ժամանակ էլ եղավ «Մաշտոցի» երեք հատորների շնորհանդեսը: Միջոցառումն սկսվեց Տերունական աղոթքով: «1997 թ., երբ մեր հանրապետությունում տեղի էին ունենում արժեհամակարգի փոփոխություններ, վերարժեւորումներ ու ցավոք նաեւ արժեզրկում, այդ ժամանակ Վանաձորում մի քանի նվիրյալների շնորհիվ կյանքի է կոչվում դպրության լույս ճառագող «Մաշտոց» հանդեսը»,- իր բացման խոսքում նշեց Դ. Սարգսյանը՝ շեշտելով կենտրոնի կրթական, մշակութային, հրատարակչական գործունեությունը:

Գրքերում ներկայացված են «Մաշտոց» հասարակական, կրթամշակութային, հայագիտական հանդեսի համարները: Գրքերը կազմել է հանդեսի հիմնադիր եւ գլխավոր խմբագիր Գագիկ Աթաբեկյանը:

Գրքի առաջին հատորը ներառում է հանդեսի Ա-Թ համարները, որոնցում լուսաբանվում են 1997-2005 թթ. Հայաստանի Հանրապետությունում՝ մասնավորապես Լոռու մարզում, կրթական, մշակութային կյանքը, ուշագրավ իրադարձությունները, կան նշանավոր լոռեցիներին ներկայացնող հոդվածներ:

Գրքերը լույս են տեսել Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ եպս Չուլջյանի խորհրդատվությամբ, լույս ընծայման հովանավորը Վանաձորի Վազգեն Ա-ի անվան կրթահամալիրի եւ «Մաշտոց» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է:

Երկրորդ հատորը ներառում է 2005-2008 թթ. կրթամշակութային հանդեսի Ժ-Ղ համարները: Ժ հատորում ընդգրկված են 10 տարիների 10 լավագույն հրապարակումները՝ Վլադիմիր Ավետիսյանի «Շիրազը ոգի է...», Վալտեր Թորոսյանի «Անծով երկրի ծովակալը», Արա Սիմոնյանի «Փոքրամարմին hսկան», Վահագն Մուղնեցյանի «Երկիր ծիրանի» բանաստեղծությունների շարքը, Գագիկ Խաչատրյանի «Արարման տենչով», Գագիկ Աթաբեկյանի «Էրեգ լավ էր, կանց վուր էսօր», Սամվել Խալաթյանի «Մարտադաշտում զինվոր, արտում՝ մաճկալ» եւ այլ նյութեր:

Երրորդ հատորում ներկայացվում են 2008-2010 թթ. Ճ-Ջ համարները:

Մաշտոցյան այս սուրբ միջոցառմանը գրադարանն անդրադառնալու է ողջ տարվա ընթացքում՝ բազմաբնույթ միջոցառումներով: Իսկ «Մաշտոց» կրթամշակութային կենտրոնը միջոցառումների շարքն ամփոփելու է Թարգմանչաց տոնին՝ հոկտեմբերին:

*Գոհարինե ՋՈՒԼՀԱԿՅԱՆ*

# Կատարվեց Արմավիրի Բերքաշատ գյուղի եկեղեցու հիմնարկեքը

Մարտի 28-ին Արմավիրի մարզի Բերքաշատ գյուղում, նախագահությամբ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս Ադամյանի, մասնակցությամբ Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արք. Բունիաթյանի եւ Արմավիրի թեմի հոգեւոր դասի, կատարվեց եկեղեցու հիմնարկեքի արարողությունը:

Գինով, ջրով լվացվեցին նախապես ընտրված 16 վեմ քարերը, որոնց համար ընտրվել էր 16 կնքահայր: Այդ պատասխանատու պարտականությունը սիրով ստանձնել էին Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, եկեղեցու բարերար



Խաչատուր Խաչատրյանը, համայնքապետ Հարություն Չվչյանը, բարերարի որդիները եւ համագյուղացիներ:

Գյուղը եկեղեցի չի ունեցել, եւ տարիներ շարունակ գյուղի բնակիչներն այցելել են տարածաշրջանի գյուղերում գտնվող եկեղեցիներ: Եկեղեցու բարերար Խաչատուր Խաչատրյանը, որ երկար ժամանակ է, ինչ բնակվում է Կիեւում, նախաձեռնեց հայրենի գյուղում կառուցել եկեղեցի:

Եկեղեցու ճարտարապետն է Խաչիկ Դանիելյանը, ով նաեւ Մեծամոր քաղաքի Սբ Ղազար եկեղեցու նախագծողն է: Կառուցման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2012 թվականի գարնանը:

*Առաջնորդարան Արմավիրի թեմի*



# Ո՞ՒՐ Է, ՄԱ՛Հ, ՔՈ ՀԱՂԹՈՒԹՅՈՒՆԸ, Ո՞ՒՐ Է, ԳԵՐԵԶՄԱ՛Ն, ՔՈ ԽԱՅԹՈՑԸ...

*Սկիզբը՝ էջ 2*

Ու շունչ մտավ նրանց մեջ, եւ կենդանացան: Ելան կանգնեցին իրենց ոտքերի վրա, դա բազմախուռն մի ժողովուրդ էր... »,- պատմում է մարգարեն ( Եզեկիել ԼԷ 1-14): Եսայի մարգարեն նույնպես ասում է, որ «պիտի հառնեն ու կանգնեն մեռածները, որոնք գերեզմաններում են... » (Եսայի ԻԶ 19): Մեկ այլ տեղում էլ հիացմունքով հարցնում է. «Ո՞վ է լսել, ո՞վ է տեսել այսպիսի բան, որ երկիրը մեկ օրում ծննդաբերի, եւ միանգամից մի ամբողջ ազգ ծնվի... » (Եսայի ԿԶ 8): Վարդան Այգեկցին, մի տեսակ մեկնելով մարգարեի խոսքը, ասում է. «Այժմ Աստծո ակնթարթային հրամանով երկիրը կծնի Ադամի որդիներին, եւ մարդկային ցեղը կհառնի հողից, ինչպես ծաղիկները գարնանը՝ զանազան գույներով...»: Մեծն Դանիելն էլ, լրացնելով մյուսներին, մարգարեանում է. «Երկրում, հողի մեջ ննջածներից (ոչ թե մահացածներից) շատերը հարություն պիտի առնեն, ոմանք հավիտենական կյանքի համար, ոմանք հավիտենական նախատինքի ու ամոթի համար» (Դանիել ԺԲ 2): Հավատանք թե ոչ, Տիրոջ երկրորդ գալուստը, մեռելների հարությունն ու ահեղ դատաստանն անխուսափելի են յուրաքանչյուրիս համար. «Փողը պիտի հնչի, եւ ննջեցյալները հարություն պիտի առնեն մի ակնթարթում», մարդու մտքի ու հոգու համար անհասանելի ու անըմբռնելի կերպով, «որովհետեւ պետք է, որ այս ապականացու մարմինը անապականություն կրի, եւ այս մահկանացու գոյությունը հագնի անմահություն» (տե՛ս Ա Կորնթ. ԺԵ 52),- ասում է սուրբ Պողոս առաքյալը: Իսկ հարության իրողությանը չհավատացողներին զգուշացնում է, որ «եթե մեռելները հարություն չեն առնում, ապա Քրիստոսն էլ հարություն չի առել, եւ եթե Քրիստոսը հարություն չի առել, իզուր է ձեր հավատը. եւ տակավին նույն մեղքերի մեջ եք» (Ա Կորնթ. ԺԵ 16,17): Նաեւ՝ «Եթե միայն այս կյանքի համար եք հույս դրել ի Քրիստոս, ողորմելի եք, քան բոլոր մարդիկ» (Ա Կորնթ. ԺԵ 19): Ժխտելով ու չընդունելով գերեզմանից այն կողմ կյանքի գոյության փաստը, հավիտենականության իրողությունը՝ իրապես գտնվում ենք ողորմելի ու խղճուկ վիճակում: Մարդկային կյանքն առանց անմահության անիմաստ ու աննպատակ գոյություն է: Ո՞րն է մեր կյանքի նպատակը, եթե մի օր մեռնելու ենք ու փոշիանանք հողի մեջ: Աստծո պատկերն ու նմանությունն ունեցող մարդը չի կարող այդպիսի վախճան ունենալ: Մարդն ունի անմահ հոգի, ինչպես ասում է Ժողովողն իր գրքում. «Մարդու աճյունը, ինչպես որ հող էր, հող պիտի դառնա, եւ հոգին, որ Աստված էր տվել, պիտի վերստին Նրա մոտ գնա» (Ժողովող ԺԲ 7): Եթե չենք հավատում հոգու անմահությանը, այդ դեպքում ինչո՞վ է պայմանավորված մեր ունեցած հարգանքը գերեզմանների հանդեպ, չէ՞ որ մենք մեր նախնիների աճյունները հարգում ենք, որովհետեւ թեկուզ ենթագիտակցորեն հավատում ենք, մի ներքին ձայն կարծես ասում է մեզ, որ նրանք հավետ չմեռան, այլ կենդանի են, այսինքն՝ նրանց անմահ հոգիները... Ըստ Արշակ Տեր-Միքելյանի՝ «մահվամբ բաժանվում է հոգին մարմնից, որ հետեւանք է Աստծո դեմ մեղանչելուն, իսկ հարությամբ միանում է հոգին մարմնի հետ, որ փոխադարձաբար հետեւանք է մարդու հաշտության Աստծո հետ Քրիստոսի փրկագործության շնորհիվ»: Ուրեմն քրիստոնյա մարդն իր հարազատին հողին է հանձնում՝ միանշանակ հարության հույսով: Ահա թե ինչու մահացածներին կոչում ենք ննջեցյալներ, այսինքն՝ ննջածներ, ովքեր մի օր զարթնելու են քնից՝ Քրիստոս Աստծո ահեղ ձայնը լսելով:

Քրիստոսի հարության վկաները՝ առաքյալները, եղան հարության իրականության տարածողները, երբեմնի «անուս ու պարզսիրտ» մարդիկ իրենց անընկճելի հավատքով եւ նահատակությամբ եւս մեկ անգամ հաստատեցին հարության ու անմահության գոյությունը: Առաքյալներից սկսած ու հետագա դարերում շարունակվող սրբերի նահատակություններին թիվ ու հաշիվ չկա: Ինչո՞ւ մեզ նման հողանյութ բնություն ունեցող մարդկանց համար մահը սարսափելի չէր, իսկ մահվան գործիքները, որոնցից մեկն իսկ բավական էր նրանց խուճապի մատնելու եւ նահատակությունից հետ պահելու համար, չասասանեցին նրանց հավատը, ինչո՞ւ նրանք երբեք չկուրացան խոստացված նյութական հարստությամբ ու աշխարհիկ փառքով՝ զրկվելով երկնային անթառամ պսակներից: Անշուշտ, որովհետեւ գնում էին գիտակցված մահվան, հավատում էին մահվանից հետո կյանքի գոյությանը, հավատում էին, որ նահատակությամբ պիտի միանան իրենց հավատի զորագլուխ Հիսուս Քրիստոսին. վայրկյան առաջ մարմնից դուրս գալու եւ Քրիստոսին միանալու տենչն անվախ էր դարձնում նրանց, քանզի գիտեին, որ ժամանակավոր են չարչարանքները, սակայն հավիտենական է հանգիստը՝ արքայության մեջ, հավատում էին համընդհանուր հարության ու արդարների երանավետ փառքին արքայության մեջ: Հարության անխախտ հավատն իրենց սրտում գիտակցված մահվան գնացին նաեւ մեր սուրբ Վարդանանք, որոնց համար նույնպես «Կյանքը Քրիստոսն էր, իսկ մեռնելը՝ շահ» (Փիլ. Ա 21): Նրանք գիտեին, որ մահը սկիզբն է հավիտենականության, որ մահվամբ ամեն ինչ չի վերջանում, այլ սկսվում է միայն: Մահը վերջին օրն է այս ժամանակավոր կյանքի, առաջին օրը՝ հավիտենականության: Ահա թե ինչու այս անխախտ հավատն իր սրտում չունեցող մարդը չի կարողանում մխիթարություն գտնել հարազատի կորստի դեպքում, անհույս տառապում ու սփոփանք չի գտնում, որովհետեւ չի հավատում, որ նորից է տեսնելու իր սիրելիին, երբ Տերը գա՝ աշխարհը դատելու, երբ ննջեցյալները հարություն առնեն մեռելներից ու կանգնեն ահեղ դատաստանի առջեւ, որպեսզի յուրաքանչյուրը ժառանգի այս աշխարհում իր սերմանածի պտուղները...

Քրիստոսի լույս հարության հավատն ու արդար դատաստանի սպասումն են մեզ ուժ տալիս համբերությամբ ու հնազանդությամբ կրելու կյանքի հասցրած դժվարություններն ու դառն հարվածները, ամեն քայլափոխի հանդիպող գայթակղություններն ու փորձությունները: Քրիստոնյան իր կյանքի ամենաողբերգական ու մռայլ պահերին անգամ զորանում է Քրիստոսով, պայքարելու ուժ գտնում, որովհետեւ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»՝ խոստանալով. «Ուր ես եմ, այնտեղ կլինի եւ Իմ ծառան...» (Հովհ. ԺԲ 26): «Ես հաղթեցի աշխարհին»,- ասաց Նա, Ով զորացնում է Իր հետեւորդներին՝ Իր օրինակով հաղթելու մահվան բռնությանը, ժառանգորդը լինելու Երկնքի արքայության: Քրիստոսի հարությամբ մահն այլեւս սարսափելի չէ քրիստոնյայի համար, որովհետեւ նա փորձում է հնարավորինս «հաշտ ապրել մահվան» հետ իր «պանդխտության ժամանակը»՝ ամեն օր սպասելով նրան՝ իբրեւ բարեկամի:

Ուրեմն զուր չկոչենք մեզ քրիստոնյաներ, եթե հարության հույս ու հավատ չունենք... Ամեն անգամ Քրիստոսի հրաշափառ Հարության հոգենորոգ տոնը տոնելիս, հարության խորհրդի առջեւ անկեղծորեն հարց տանք ինքներս մեզ. «Իսկ ես հավատո՞ւմ եմ հարության իրողությանը, թե՞ այն ինձ համար հեքիաթ է լոկ»: Խնդրենք Աստծուն զորացնել մեր հավատը, որպեսզի առավել լուսավորվեն մեր հոգու աչքերը՝ հավատալու ավետարանական ճշմարտություններին, Աստծո անսուտ խոստումներին: Փարատենք մահվան վախը մեր հոգիներից, քանզի մեր Փրկչի մահն ազատագրեց մեզ. «Քրիստոս հարյավ, իսկ դեւերն ընկան, Քրիստոս հարյավ, եւ հրեշտակները ցնծում են...» (սուրբ Հովհ. Ոսկեբերան): Քրիստոս հարյավ, եւ մահը կուլ գնաց հաղթության: Պողոս սրբազան առաքյալի հետ հաղթականորեն գոչենք. «Ո՞ւր է, մա՛հ, քո հաղթությունը, ո՞ւր է, գերեզմա՛ն, քո խայթոցը» (Ա Կորնթ. ԺԵ 55): Հաղորդ լինենք Քրիստոսի լույս հարության անմահացուցիչ զորությանը: Փա՜ռք Քրիստոսի ամենազոր հարությանը...

«Քրիստոս հարյավ ի մեռելոց, օրհնյալ է հարությունը Քրիստոսի»...

*ԱՆԺԵԼԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՀԱԿՈԲ Դ ՋՈՒՂԱՅԵՑԻ (1655-1680)

*Սկիզբը՝ էջ 3*

Նա դրանից առաջ գնացել էր Էջմիածին եւ անգամ Մոլդովիայի եպիսկոպոս էր նշանակվել: Գժտվելով ժողովրդի հետ՝ նա հեռացել էր Երուսաղեմ եւ այնտեղ 7 տարի մնալուց հետո անցել էր Հռոմ ու դարձել հռոմեադավան, այնտեղից էլ 5 տարի հետո անցել էր Լիվոռնո եւ ապա եկել Լվով ու Գալանոսի օգնությամբ փոխանորդ նշանակվել:

Փիթուն սկզբում իր ամբողջ ուժը կիրառեց Լվովի վանական եկեղեցու ավագերեց Սիմեոն քահանայի դեմ, որն ամբողջությամբ հավատարիմ էր մնում հայկական ծեսերին: Նա իր աշակերտներից մեկին քահանա դրեց եւ նրա մատնությամբ Սիմեոնին ձերբակալեց: Հայոց քաղաքապետին սպառնաց, որ եթե նա պաշտպանի Սիմեոնին, ապա իր գլուխը կդնի վտանգի տակ: Վերջապես 1666 թվի հուլիսի 16-ին նա քահանային աքսորել տվեց: Փիթուն Նիկոլի եւ Կերիմովիչի հետ այցելում է Լեհաստանի հայ գաղթավայրերը՝ ծիսական փոփոխություններ մտցնելու համար:

Այդպես են վարվում Ցազլովիցում, Կամենիցում, ինչպես նաեւ այլ վայրերում: Փիթուն հաջողում է՝ շնորհիվ Նիկոլի, չնայած գիտեին, թե ով է նա: Կարիք էին զգում, որ Նիկոլը թողնի իր խայտառակ կենցաղը, արծակի կանանց, սակայն իրենց շահերից ելնելով՝ հանդուրժում էին այդ: Նիկոլը որոշում է Հռոմ գնալ՝ Փիթուի ընկերակցությամբ: 1667 սեպտեմբերի 26-ին գալիս են Կրակով, սակայն կազակների ապստամբության պատճառով մտափոխվում են եւ հոկտեմբերի 19-ին վերադառնում Լվով: Այստեղ էր ժամանել Ջուզեպպե Գրազիոլին, որին նշանակել էին Գալանոսի տեղը: Սա, չիմանալով ինչպես գործի եւ ինչպես մարդկանց շահագրգռի, հանդիպում է Նիկոլի դիմադրությանը: Անգամ հիվանդության ժամանակ արգահատանքի չի արժանանում եւ մահանում է 1667 թվի դեկտեմբերի 30-ին՝ 39 տարեկան հասակում: Կրկին տեսչությունն անցավ Փիթուին, որը շողոքորթելով, երբեմն ճնշում գործադրելով՝ կարողանում էր իրեն ենթարկել Նիկոլին: Նա շարունակեց հռոմեադավանությունը տարածել հայերի շրջանում՝ ամեն անթույլատրելի միջոցներով:

Պապական նոր նվիրակ էր Գալեացցո Մարեսկոտտին, որը տեսնելով Նիկոլի այլանդակությունները եւ անարժան մարդկանց ձեռնադրվելը՝ համոզում է նրան Հռոմ գնալ: Նիկոլը Հռոմ մեկնեց 1668 թվի հոտեմբերի 11-ին եւ տեղ հասավ դեկտեմբերի 31-ին՝ 20 ուղեկիցներով եւ 21 ձիերով: Ո՞րն էր նրան Հռոմ կանչելու նպատակը: Մի կողմից նրա անառակ կյանքն իրենց դուր չէր գալիս, իսկ մյուս կողմից նրա փոփոխամիտ ընթացքը նրանց վտանգավոր էր թվում՝ իրենց նպատակին ծառայելու համար: Նրան հեռացնելով եւ Կերիմովիչին թողնելով տեղապահ՝ նրանք կարող էին հռոմեադավանության գործն առաջ տանել՝ մանավանդ որ ունեին Լեհաստանի պետական աջակցությունը: Նրա բացակայության շրջանում Փիթուն Կերիմովիչի ձեռքով հեռացրեց հին քահանաներին եւ նրանց տեղը երիտասարդների նշանակեց: Հայկական ծեսերը կամաց-կամաց հանվեցին՝ որպես հերետիկոսություն: Այս հաջողությունների արդյունքը եղավ Փիթուին 1670 թվին առաքելության տեսուչ նշանակելը, քանի որ մինչ այդ նա ընդամենը փոխանորդ էր: Նրան կարող էր խանգարել միայն ներքին գժտությունը: Փիթուին օգնության ուղարկված Ջուզեպպե Բագատտա Վերոնացին, որ Լվով եկավ հունիսի 22-ին, ատում էր հայերին եւ չէր կամենում շարժվել Փիթուի խորամանկ



ճանապարհով: Նա ընդդիմանում էր ամեն ինչի, մինչեւ որ ծագեց նրան հեռացնելու խնդիրը: Եվ 1671 թվի հուլիսի 15-ին Բագատտան ստիպված եղավ վերադառնալ Իտալիա: Այդ ժամանակներում Լեհաստան է գալիս Թադեոս Համազասպյանը՝ Ոսկանի տպագրած գրքերը վաճառելու համար: Փիթուն դրան հակառակվում է, հատկապես՝ Դավիրժեցու հարցում: Սակայն Կերիմովիչի թույլտվությամբ գրքերը վաճառվեցին, եւ Թադեոսը դրանից հետո անցավ Մոլդովիա եւ Վալախիա:

Փիթուն, Հռոմից օգնություն ստանալու համար, 1671 թվի հոկտեմբերի 26-ին Լվովից մեկնեց եւ Հռոմ հասավ 1672 թվի հունվարի 16-ին: Հայերին լատինացնելու գործը նա հանձնարարեց Ավգուստինոս Լոբելլիին եւ Ջիրոլամո Բոսսիին: Առաջինը պետք է զբաղվեր վարչական ու կրթական, իսկ երկրորդը՝ մատակարարման եւ դրամական խնդիրներով:

*Շարունակելի*

***ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր***

# ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է
## *Մայր Աթոռ Սբ Էջմիածնում (2011 թ.)*

### Մելքիսեդեկ վրդ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ
# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ

## ՎԵՑԵՐՈՐԴ ՇՐՋԱՆ

*Հայրապետական Աթոռոյ փոխադրութենէն յէջմիածին մինչեւ ի բաժանումն Լատինահայոց ի ծոցոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ:*

1441-1700

Ա.

Վիճակ Հայաստանեայց Եկեղեցւոյ. - կաթողիկոսունք Կիրակոս Ա Վիրապեցի, Գրիգոր Ժ, Զաքարիա Բ, Արիստակէս Բ, Սարգիս Բ, Արիստակէս Գ, Թադէոս Ա:

ԵՐԲ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ հայրապետական Աթոռն երկարատեւ աստանդականութենէ զկնի վերստին յէջմիածին փոխադրեցաւ, եւ Կիրակոս Վիրապեցին կաթողիկոսացաւ, Գրիգոր Մուսաբեգեանցն եւս իբրեւ կաթողիկոս ի Սիս մնաց: Եւ այսպէս Ազգն երեք կաթողիկոսական աթոռներ ունեցաւ յէջմիածին, ի Սիս եւ յԱղթամար (որ մասնաւոր աթոռ եղած էր 1113 թուականէն, Դաւթի կաթողիկոսութենէն ի վեր), որոնք կը տեւեն մինչեւ մեր օրերը: Սակայն այս բաժանումը լոկ աթոռական եղած է եւ ո՛չ երբեք ժողովրդային կամ տարբեր դաւանութեան: Այս բաժանմամբ երբեք խախտած չէ ժողովրդային միութիւնը՝ եւ թէպէտ երեք աթոռոց կաթողիկոսներն երբեմն իրարու դէմ զինած են եւ հակառակութիւններ յարուցած, բայց բարեբաղդաբար Ազգը միշտ հաւատարիմ մնացած է իւր մայրենի Եկեղեցւոյ վարդապետական, դաւանաբանական եւ ծիսական միութեանը՝ Էջմիածնի Աթոռը հանուր հայրապետական աթոռ համարելով, իսկ Սսոյ եւ Աղթամարայ աթոռներն՝ մասնաւոր կաթողիկոսական: Եթէ պատմագիտական նուրբ աչքով նայինք, կը տեսնենք, որ այս աթոռոց սկզբնաւորութիւնն ու տեւականութիւնը հետեւանք է Ազգի քաղաքական վիճակի տարբերութեան: Ազգային ինքնօրէն քաղաքականութեան բարձումէն եւ տարբեր քաղաքական իշխանութեանց ենթարկուելէն յառաջ եկած է այս կաթողիկոսական երեքնութիւնը: Մի կողմէն քաղաքական տարբեր իշխանութեանց հակակիր ազդեցութիւններն եւ միւս կողմէն հայկազն ժողովրդի ցրուածութիւնը եւ միակ կաթողիկոսութեան հետ ունեցած հաղորդութեան դժուարութիւնքն առիթ տուած են մանաւանդ Էջմիածնի եւ Սսոյ կաթողիկոսութեանց առանձին գոյութեանն ու տեւականութեանն, վասն զի




արդէն տեսանք նախընթաց Շրջանին մէջ, թէ ի՞նչ դժուարութիւններ կային Արեւելեան Հայոց համար յարաբերութիւն ունենալ Արեւմտականաց կամ Կիլիկեցւոց հետ: Եթէ նուրբ նայինք, նոյն դժուարութիւններն ակներեւ կը տեսնենք մինչեւ ցայսօր: Իսկ Աղթամարայ կաթողիկոսական գոյութեան եւ տեւականութեան գլխաւոր պատճառն իւր կղզիական դիրքն եղած է, քան թէ մի այլ պարագայ: Հետեւապէս, եթէ մտածենք, որ կաթողիկոսութիւնը մի վսեմ պարտակատարութիւն է եւ ո՛չ լոկ անուանակրութիւն, եթէ մտածենք, որ կաթողիկոսական օրինաւոր, պարտաւճար եւ համամիտ աթոռակալներ կարող են աւելի նպաստել Ազգի վիճակին եւ դիւրել զանազան իրողութիւններ եկեղեցական վարչութեան, եպիսկոպոսական ձեռնադրութեան եւ այլ ժողովրդային մօտաւոր յարաբերութեանց մասին, կը տեսնենք, որ կաթողիկոսական երեքնութիւնն ամենեւին վնասակարութիւն կարող չէ ունենալ: Քանի որ Եկեղեցին ու ժողովուրդն մի է, քանի որ իշխող տէրութիւններն քաղաքականօրէն տարբեր ազդեցութիւն ունեցած են եւ ունին Ազգին վրայ, կաթողիկոսական երեքնութիւնը կամ երկուութիւնը կարեւոր եղած է եւ է: Այս երեքնութիւնն ինքնին կը միանայ, երբ Ազգը յաջողի իւր Եկեղեցւոյ հանուր Հայրապետութեան նախնի իրաւունքներն վերահաստատել եւ քաղաքական ազդեցութիւներէ ու վտանգներէ անկախ եւ ազատ կացուցանել: Թողունք այս, եւ ներկայ Շրջանի պատմական թելն շարունակենք:

Կիրակոս Վիրապեցին, Էջմիածնի մէջ կաթողիկոսական օծումն ընդունելէն զկնի, շրջաբերական գիր կ՚ուղղէ Հայաստանի վիճակաւոր եպիսկոպոսներուն եւ նոյնպէս Սսոյ, Աղթամարայ եւ Աղուանից կաթողիկոսներուն՝ յորդորելով զամենեսեան ի սէր եւ ի խաղաղութիւն: Կը կարգաւորէ հայրապետական աթոռն, սատարութեամբ Թովմայ վարդապետի Մեծոբեցւոյ, կը նորոգէ Վաղարշապատի հինօրեայ տաճարն եւ այլ վանօրայք եւ եկեղեցիք, եւ մինչդեռ սոյնօրինակ բարեկարգութեամբ կը պարապի, յանկարծ քանի մի եպիսկոպոսաց եւ վանականաց շնորհիւ Կիրակոս կը զրպարտուի իբրեւ կախարդ եւ հերձուածող, կը չարախօսուի Արարատեան գաւառի օտարազգի իշխանին առջեւ եւ մինչդեռ չարախօսները կը յարձակին կաթողիկոսը գահավիժել, նա կը փախչի եւ կը թաքչի, որոյ հակառակորդներն իսկոյն կաթողիկոս կ՚ընտրեն եպիսկոպոսն Մակուայ Գրիգոր, իսկ Կիրակոս կը վախճանի երկամեայ կաթողիկոսութենէն զկնի:

Գրիգոր Ժ Մակուեցի կը շարունակէ Կիրակոսի կիսակատար թողած նորոգութիւններն ու բարեկարգութիւնները, իրեն գործակից կ՚ընտրէ Արիստակէս անուն մի վարդապետ եւ կ՚անուանէ Աթոռակալ: Սակայն այս պատուանունը, որ միայն կաթողիկոսաց պահուած էր, ժամանակցաց մէջ ս՚ովորական դառնալով՝ կաթողիկոսական փոխանորդներու կամ տեղակալներու համար, եւ շատերու իշխանասիրութեանը ճարակ տալով՝ տեղի կը տայ զանազան հակառակութեանց եւ հայրապետական անուանց շփոթութեան:

Գրիգորի կաթողիկոսութեան ժամանակ Օսմանցիք կը տիրեն Կ. Պոլսոյ, եւ Սուլթանն Մեհմէտ Ֆէթիհ արքունի հրովարտակաւ Յունաստանի եւ Անատոլիոյ հայկազանց վրայ առաջնորդ կը կարգէ (1461) Պուրսայի Յովակիմ եպիսկոպոսն, Փաթրիկ, այսինքն՝ Պատրիարք տիտղոսով, յորմէ եւ կը սկսի Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնն եւ կը տեւէ մինչեւ ցարդ զանազան արտօնութիւններով: Իսկ բուն Հայաստանի մէջ ներքին եւ արտաքին աղմուկներն անընդհատ կը տագնապեն զԱզգն ու Եկեղեցին: Արիստակէս աթոռակալի եւ Գրիգոր կաթողիկոսի մէջ սաստիկ գժտութիւն կը ծագի, եւ կաթողիկոսարանի Սարգիս անուն վարդապետը, Լուսաւորչի աջը Էջմիածնէն գողանալով, Պարսկաստան կը փախչի, որպէս զի Ջահան Շահի օգնութեամբ յինքն յափշտակէ կաթողիկոսական իշխանութիւնը: Սակայն Աղթամարայ Զաքարիա կաթողիկոսն, իրազեկ լինելով այս անցքին, կը դիմէ ի Դաւրէժ նոյն Շահին առջեւ, զանազան նուէրներով յետ կ՚առնու Լուսաւորչի աջն եւ իշխանական պատուով դառնալով յէջմիածին, Գրիգորն ու Արիստակէսն կը մերժէ, եւ ինքն կ՚աթոռակալէ իբրեւ ընդհանուր կաթողիկոս՝ իւր իշխանութեան ներքեւ ունենալով նմանապէս եւ Աղթամարայ աթոռն: Իսկ Սարգիս վարդապետը կը կարգէ կաթողիկոսական փոխանորդ՝ եպիսկոպոս ձեռնադրելով յէջմիածին:

Զաքարիա կը յաջողի Ջահան Շահի եւ Ջիհանգիր Սուլթանի հակառակութիւններն խաղաղել եւ Հայաստանի աւերումներն առ ժամանակ մի դադարեցնել: Սակայն Գրիգորի եւ Արիստակիսի ձեռքով կը չարախօսուի իբրեւ բազմագանձ եւ ճոխ ոք Ջահան Շահի որդւոյն առջեւ եւ տեսնելով, թէ անհնարին պէտք է լինի կաթողիկոսական իշխանութիւն վարել Էջմիածնի մէջ, ծածկաբար Լուսաւորչի աջն առնելով՝ կը փախչի յԱղթամար, շատ մեծարանք գտնելով թէ՛ տեղական օտարազգի իշխաններէն եւ թէ՛ ժողովրդէն: Զաքարիայի փախստենէն յետոյ Գրիգոր կը վախճանի եւ Արիստակէս կ՚աթոռակալէ իբրեւ կաթողիկոս, եւ Սարգիս կը վարէ փոխանորդութիւնն: Սակայն Արիստակէս Բ չորս տարիէն յետոյ կը վախճանի առանց նշանաւոր գործոյ եւ կը յաջորդէ Սարգիս (1466):

Սարգիս կաթողիկոսանալէն զկնի կը ջանայ Լուսաւորչի աջը դարձուցանել Աղթամարէն, բայց անհնարին կը լինի: Վերջապէս, ըստ պատմական աւանդութեան, Վրթանէս եպիսկոպոս ոմն ծպտեալ կերպարանօք Աղթամար մտնելէն եւ երկար ժամանակ մնալէն յետոյ կը յաջողի նոյն սուրբ աջն յէջմիածին դարձնել, եւ այս ճարտարութեան համար Փակակալ կը կարգուի Էջմիածնի: Սարգսի կաթողիկոսութեան ժամանակ Սսոյ կաթողիկոսն էր Յովհաննէս Թուլկուրանցի, որ թողած ունի քանի մի տաղաչափական գրուածքներ: Սարգիս 24 ամեայ կաթողիկոսութենէն զկնի կը վախճանի, եւ կը յաջորդէ Արիստակէս Գ առանց նշանաւոր ինչ գործողութեան, եւ սորան կը յաջորդէ իւր փոխանորդն Տէր Թադէոս Ա:


**Գ. Տրդատի վերադարձն ու Գրիգոր Լուսաւորիչ:** Վերեւը յառաջ բերած հարեւանցի տեսութիւնը Հայաստանի քաղաքական վիճակի մասին ցոյց էր տալիս, թէ որչափ դժուար է որոշել այն տարին, երբ Տրդատ թագաւոր հաստատուեցաւ: Դորա համեմատ դժուարանում է որոշել նաեւ նորա դարձի թուականը: Ագաթանգեղոսի պատմելով՝ Տրդատ Հայաստան ոտ դնելուց անմիջապէս յետոյ Գրիգորին հարկադրեց պաշտօն մատուցանել Անահիտի արձանին Երիզայում, եւ երբ սա մերժեց, անտանելի տանջանքներ տալով՝ հրամայեց տանել, ձգել Արտաշատի Խոր վիրապը, որտեղից նա ելաւ, նոյն Ագաթանգեղոսի աւելի վաւերական տեղեկութիւնների համաձայն, 13 տարի յետոյ (Ագաթանգեղոսի ուրիշ մասերում 15 տարի է հաշուած): Արդ, եթէ Տրդատ թագաւորել է 261 թուին, նորա դարձը եւս կարող էր լինել արդէն 273-ին՝ Աւրելիանոսի նուաճումներից անմիջապէս յետոյ: Եւ կան նշաններ, որոնք կարծես իրաւունք են տալիս այդչափ վաղ դնել հայերի քրիստոնէութիւնն ընդունելը: Բայց նոյնիսկ այդ դէպքում նոր կրօնի տարածումն ու հաստատութիւնը տեղի կարող էր ունենալ աւելի 284-286 թուերից, մանաւանդ 298-ից յետոյ տիրող խաղաղութեան շրջանում: Ուստի շատ հեռու չի եղել ճշմարտութիւնից մեր մէջ ընդունուած այն տեղեկութիւնը, թէ Տրդատ, զահ նստած լինելով 287 թ., քրիստոնէութիւնը եւս ընդունել է 300 թուին: Յամենայն դէպս, որ Դ դարի սկզբում հայերը յայտնի էին օտարներին իբրեւ քրիստոնեայ ժողովուրդ, դորա համար ունենք մի շատ արժէքաւոր վկայութիւն: Եւսեբիոսի Եկեղեցական պատմութեան մէջ յիշւում է, որ 312 թուին քրիստոնեայ հայերն իրենց հաւատի պաշտպանութեան համար մի պատերազմ են ունեցել քրիստոնէութիւնը հալածող Մաքսիմեանոս Դայա Կեսարի հետ: Այսպիսով, օտար պատմիչները եւս համաձայն են, որ Տրդատ քրիստոնէութիւն ընդունեց Կոստանդիանոսից շատ առաջ, եւ առաջին անգամ Հայաստանում քրիստոնէութիւնն ազատ կրօն հրատարակուեցաւ: Դոցանից մէկն ասում է, որ քրիստոնէութիւնը հրաշքով հաստատուեցաւ Հայաստանում, եւ մեր պատմութիւնը հաստատում է Հայոց դարձի այդպիսի հրաշալի բնաւորութիւն ունենալը:

### Կարապետ Ծ. վրդ. ՏԵՐ-ՄԿՐՏՉԵԱՆ
# Հայոց եկեղեցւոյ պատմութիւն. մասն Ա




Ըստ Ագաթանգեղոսի՝ Տրդատ թագաւորն սկզբում հալածող էր քրիստոնէութեան: Նա իւր կրթութիւնը ստացել էր յունական աշխարհում եւ յունական փիլիսոփայութեան ուսմամբ վարժուած էր:

*Շարունակությունը՝ էջ 6*

Կից մենյակում

# ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱԿՆԵՐ
# «ՄԵԾ ԽՆՋՈՒՅՔԻ ԱՌԱԿԸ»

(Ղուկ. ԺԴ 15-24)

## Մեր հյուրն է Բյուրավանի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տ. Ղազար քհն. ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

**- Ղուկասի Ավետարանում այս առակին նախորդում է մի իրադարձություն. դա ջրգողով հիվանդի բժշկումն էր շաբաթ օրով՝ փարիսեցի իշխանավորի տանը, ուր Հիսուսը ժողովարանում հերթական քարոզությունից հետո հրավիրվել էր ճաշի, որի ընթացքում Տերն առականման խրատով դիմում է նախ հրավիրվածներին, ապա եւ տանտիրոջը, որից հետո միայն պատմում է «Մեծ խնջույքի առակը», ինչն էլ, ըստ էության, ամբողջացնում է ասելիքը: Մեկնիչներն էլ սովորաբար այս ամենը դիտում են իբրեւ միեւնույն նպատակին ծառայող ամբողջություն:**

- Անկասկա՛ծ մեկ ամբողջություն է, եւ առակն էլ դրա կիզակետն է: Այստեղ նույնպես շատ կարեւոր է միջավայրի հանգամանքը, որում տեղի են ունենում իրադարձությունները: Դա մեզ քաջ ծանոթ փարիսեցիական միջավայրն էր: Ավելին. Հիսուսին հացի հրավիրողն այս անգամ սովորական փարիսեցի չէր, այլ իշխանավոր, եւ արդեն պարզ է, թե ովքեր պիտի հրավիրված լինեին այնտեղ եւ ինչ նպատակով:

Մեր Տերն այս ամենը շատ լավ գիտեր եւ պատրաստ էր փարիսեցիների լարած ցանկացած որոգայթին դիմագրավելու՝ բացահայտելով դրանք եւ ամոթահար թողնելով դավ նյութողներին: Մեկ անգամ չէր, որ Քրիստոսը վշտացած սրտով հանդիմանել եւ վայերի տարափ էր թափել կեղծավոր օրենսգետների, դպիրների եւ փարիսեցիների վրա, որոնք մովսիսական Օրենքի անունից խոսելով՝ իրենք իսկ ոտնահարում ու անտեսում էին այն: Այս դեպքում ծուղակը ջրգողով հիվանդն էր, որը ներկա էր իշխանավոր փարիսեցու հրավերքին: Ի՞նչ անել: Թեկուզեւ օրը շաբաթ էր, Հիսուսը չէր կարող չբուժել հիվանդին: Եվ բուժեց: Բայց միայն Իրեն բնորոշ՝ խորագետի իմաստությամբ նախ հարցրեց ներկա գտնվող օրենսգետներին ու փարիսեցիներին, թե շաբաթ օրով բժշկելն օրինավո՞ր է (Ղուկ. ԺԴ 3): Եվ երբ նրանք լուռ մնացին, քանի որ չգիտեին, թե ինչ է ասելու կամ անելու Տերը, նոր միայն բժշկեց հիվանդին եւ առանց նրանց պատասխանին սպասելու՝ շարունակեց. «Ձեզնից ո՞ւմ եզը կամ էշը ընկնի ջրհորի մեջ, նա իսկույն այն չի հանի շաբաթ օրով» (Ղուկ. ԺԴ 5): Եվ այս հարցին էլ պատասխան չունեին, քանի որ եթե ասեին, թե չեն հանի, բացահայտ սուտ պիտի լիներ: Որովհետեւ իրենք դա անում էին, եւ որեւէ մեկը չէր թողնի, որ իր անասունը սատկի: Եվ դա չէին համարում օրինախախտություն: Իսկ այս դեպքում, երբ մի հավիտենական հոգի ապաքինվելու եւ Աստծու շնորհին ստանալու կարիքն ուներ, նրանք հանկարծ հիշում էին Օրենքը, որն իբրեւ թե արգելում է շաբաթ օրով բուժել: Եթե ոչ կեղծավորություն, ապա առավել վատթար՝ սրտի կուրություն էր դա, որ մարդուն ստորադասում էին կենդանուց, ինչի համար Քրիստոսն իր հարցմամբ հանդիմանեց փարիսեցիներին...

**- Դրանով իսկ, թերեւս, կանխեց փարիսեցիների նենգադավ մտադրությունները: Մաղաքիա Օրմանյանն ասում է՝ հատուկ էին հրավիրել ջրգողով հիվանդին, որ Տիրոջը փորձության ենթարկեին:**

- Անշուշտ: Եվ սա Ավետարանում հիշատակվող բազմաթիվ նմանատիպ դրվագներից մեկն է միայն: Սա փարիսեցիների գործելակերպն էր, կենսակերպը, մտածողության կերպը, քանի որ նրանք իրենց սրտի մեջ մշտապես ունեին այդ ամբարտավանությունը՝ հակադրվելու ախտը: Թշնամության բուն օջախը հենց իրենց ներսում էր:

**- Շարունակենք՝ մոտենալով բուն առակին: Այնուհետեւ Տերը խոնարհության դաս է տալիս խնջույքի հրավիրվածներին: Ինչո՞ւ:**

- Այդ առականման խրատը Հիսուսն ասաց հրավիրվածներին, երբ տեսավ, «թե ինչպես նրանք պատվո տեղերն էին ընտրում»: Եվ այս պարագայում Տիրոջ խոսքը հույժ տրամաբանական եւ իմաստուն էր՝ ճիշտ ժամանակին ասված: Ասաց. «Առաջին տեղը մի՛ նստիր, գուցե քեզնից ավելի պատվական մեկը նրա կողմից կանչված լինի»: Պատկերացրեք այդ վիճակը. հրավիրողը ի՞նչ պիտի ասի. լավագույն դեպքում, ներողություն խնդրելով, պետք է քեզ ցույց տա ավելի «ցածր» տեղ, ու դու պիտի ամոթահար լինես բոլորի ներկայությամբ: Պարզ տրամաբանություն է՝ բոլոր ժամանակների եւ ամեն մարդու համար ասված. եթե չես ուզում անխելքի, անշնորհքի տպավորություն թողնել շրջապատի վրա եւ ծաղրուծանակի առարկա դառնալ, վերջին տե՛ղը զբաղեցրու, այսինքն՝ ինքդ քեզ խոնարհեցրո՛ւ, «որպեսզի երբ քեզ կանչողը գա եւ քեզ ասի՝ «Բարեկա՛մ, ավելի վե՛ր մոտեցիր», այն ժամանակ քո սեղանակիցների առաջ դու փառավորվես»: Եվ անմիջապես հետեւում է խրատի բարոյական եզրահանգում-ընդհանրացումը. «Որովհետեւ նա, ով ինքն իրեն բարձրացնում է, պիտի խոնարհվի, եւ նա, ով ինքն իրեն խոնարհեցնում է, պիտի բարձրանա» (Ղուկ. ԺԴ 11):

**- Իսկ ավետարանական առումով, ըստ Օրմանյանի եւ այլ մեկնիչների, սա մի խրատ է՝ ուղղված հատկապես հրեական վերնախավին, ովքեր իրենց Երկնքի արքայության առաջին շարքերում էին դասում եւ հենց դրա համար էլ պիտի գահավիժեն...**

- Ինչո՞ւ միայն հրեական վերնախավին: Առհասարակ աշխարհի մեջ բարգավաճող իշխանական մրցավազքին է վերաբերում, մեզ բոլորիս է ուղղված այս խրատը: Քրիստոսն ասում է՝ սեփական անձը խոնարհեցնողը պիտի բարձրանա: Սա հակառակ է աշխարհիկ մտածողությանը, ըստ որի՝ խոնարհությունն անպետք մի բան է, անզորության ու խեղճության հոմանիշը, իսկ սեփական անձն առաջ մղելը՝ սխրագործության պես մի բան: Քրիստոսը՝ խոնարհության, սիրո, գթասրտության, լույսի Աղբյուրը, չէր կարող չմերժել այս մտածողությունը, չէր կարող հանգիստ «հաց ուտել» այսպես մտածող մարդկանց հետ՝ նրանց երեսին չասելով ճշմարտությունը: Եվ հենց ճիշտ ժամանակին դիմում է խնջույքի տիրոջը՝ հրավիրողին, ու բարեկամաբար ասված հորդորի մեջ պարզորոշ տեսանելի է Տիրոջ հանդիմանությունը՝ այս ո՛ւմ ես հրավիրել: Ասում է. «Երբ ճաշ կամ ընթրիք ես տալիս, մի՛ կանչիր ո՛չ քո բարեկամներին, ո՛չ քո եղբայրներին, ո՛չ քո ազգականներին եւ ո՛չ էլ քո հարուստ հարեւաններին, որպեսզի նրանք էլ փոխարենը քեզ չհրավիրեն, եւ հատուցում լինի» (Ղուկ. ԺԴ 12): Այլ,- ասում է,- կանչի՛ր նրանց, ովքեր փոխարենը քեզ հատուցելու ոչինչ չունեն: Իսկ ովքե՞ր էին դրանք. աղքատները, խեղանդամները, կաղերը, կույրերը... «Եվ դրա փոխարեն քեզ կհատուցվի արդարների հարության օրը»,- ասում է Հիսուսը: Թերեւս ա՛յս պատգամն էր, որ դարձավ ակունքը քրիստոնեական բարեպաշտական այն գեղեցիկ արարողության, որը կոչում ենք մատաղ: Եկեղեցին հարաժամ քարոզել է՝ մատաղ անելիս բաժանել աղքատներին,



կարիքավորներին, ծերերին, որբերին, այլ ոչ թե այն վերածել խնջույքի, ընկեր-բարեկամների հետ կերուխումի, որն արդեն մատաղ չէ, որովհետեւ մատաղի հիմքում ողորմության գաղափարն է: Այդպես չէին մտածում փարիսեցիները, այլ՝ որքան ազդեցիկ, հեղինակավոր, «արժանավոր» մարդկանց հրավիրեն իրենց խնջույքին, այնքան առավել օգուտ պիտի լինի իրենց անձին եւ ընտանիքին: Սա տիպիկ աշխարհիկ մտածողությունն էր: Սակայն այլ է հոգեւոր մոտեցումը: Եվ աստվածային պատգամը ճիշտ հակառակն է ասում: Այն է. պիտի ջանանք մեր բոլոր գործերը հաճո դարձնել Աստծուն: Պողոս առաքյալն ասում է. «Թե՛ մնամ այստեղ, թե՛ դուրս գամ այս կյանքից, ձգտում եմ միմիայն հաճելի լինել Նրան եւ իմ անձի օգուտը համարեմ այն, ինչը որ հաճելի է Աստծուն» (հմմտ. Բ Կորնթ. Ե 9): Այսպես պետք է մտածի եւ ապրի յուրաքանչյուր քրիստոնյա, քանզի մենք բոլորս Քրիստոսի ատյանի առաջ պիտի ներկայանանք:

*Շարունակելի*

*Հյուրընկալեց Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ*

## Կարապետ Ծ. վրդ. ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ

# Հայոց եկեղեցւոյ պատմութիւն. մաս Ա



*Սկիզբը՝ էջ 5*

Նորա օրով մի քանի մեծ հալածանքներ են տեղի ունեցել Հռովմի կայսրերի կողմից. բնական է, որ նա եւս, իբրեւ նոցա աջակիցն ու ստորադրեալը, հետեւէր նոցա օրինակին: Մի հրաշալի դիպուած պետք էր ուրեմն, որ նորան ստիպէր թողնել իւր ներքին ընթացքը եւ նոր կրօն ընդունել: Այդպիսի մի դիպուած գտնում ենք Ս. Հռիփսիմեան կոյսերի՝ Դիոկղետիանոսի ձեռքից փախչելու եւ Հայաստան գալու պատմութեան մէջ: Թէ որչափ պատմական եւ մեր երկրի վերաբերեալ նիւթ է տալիս Հռիփսիմեանց վկայաբանութիւնը, հնարաւոր չէ ստուգել, բայց քանի որ այդ կոյսերի համար Լուսաւորչի ձեռքով վկայարաններ շինուելու եւ արդէն Դ դարում նշանաւոր ուխտատեղիներ դառնալու մասին կասկածի տեղիք չկայ, պետք է ընդունել որոշ առնչութիւն նոցա նահատակութեան եւ Տրդատի դարձի մէջ: Ոչինչ չկայ անհաւանական, որ Տրդատ նման մի առթիւ ծանր հիւանդութիւն ստացած եւ Գրիգոր Լուսաւորչի աղօթքին ապաւինելով՝ բժշկուելուց յետոյ քրիստոնէութիւն ընդունած լինի:

Մեր պատմութիւնը կապում է Տրդատի բախտը Հայոց Լուսաւորչի բախտի հետ արդէն նոցա մանկութեան օրերից սկսած: Գրիգոր Լուսաւորիչը ներկայանում է այստեղ իբրեւ Տրդատի հայր Խոսրովին սպանող Անակի որդին՝ սերուած ուրեմն Պարթեւ թագաւորական ցեղից, որ Տրդատի նման մանուկ հասակում տարուել էր Յունաց երկիրը եւ Կապադովկիոյ Կեսարիա քաղաքում սնուել քրիստոնէական կրօնով, ապա առանց ի վեր հանելու իւր ծագումը՝ գնացել, սպասաւոր էր եղել Տրդատի մօտ՝ հայրական մեղքը քաւելու համար: Անշուշտ, այս աւանդութեան մէջ շատ բան ճոխացրած է, եւ գուցէ իւր դարձից առաջ Տրդատ ամենեւին չէր հանդիպել Լուսաւորչին, բայց գոնէ այնքանը կարող ենք ստոյգ համարել, որ վերջինս իւր կրթութիւնը ստացել է Կապադովկիայում՝ Կեսարիա կամ գուցէ եւ Սեբաստիա քաղաքում եւ իշխանական մեծ տնից է եղել: Եթէ նա իրօք Խոսրովի սպանողի որդին էր, իսկ Խոսրովին սպանել են իւր եղբայրները, ապա ուրեմն Տրդատի հօրեղբօրորդին պիտի լինէր՝ Խոսրովի սպանութիւնից յետոյ փախցրած Հայաստանից եւ գուցէ Տրդատից առաջ՝ Արտաւազդ թագաւորի օրով այնտեղ վերադարձած: Գուցէ նա այն իշխաններից մէկն էր, որոնք գերի բռնուեցան Հայաստանում Ոտենադոսի յաղթութիւնից յետոյ եւ այդ ժամանակից ի վեր գտնւում էր Արտաշատի բանդում, մինչեւ որ մի արտաքին քաղաքական ազդեցութեան շնորհիւ ազատուեց: Իսկ Տրդատ հաշտուեց նորա հետ, երբ հակամէտ լինելով քրիստոնէութիւն ընդունելու՝ այլեւս ոխ ունենալ չէր կարող նորա դէմ իբրեւ մի յայտնի քրիստոնեի, այլ ընդհակառակը, շատ բան պէտք է սպասէր նորա աջակցութիւնից: Նշանակալից է յամենայն դէպս այն հանգամանքը, որ **Լուսաւորիչ քարոզել սկսում է հայ լեզուով՝ իբրեւ հայ մարդ, եւ մեր պատմութեան մէջ ոչ մի ակնարկ չկայ, որից երեւայ, թէ նա օտար լինէր հայոց կեանքին ու հայոց սովորութիւններին, երբեւիցէ օտար լեզու գործածէր: Ապա ժամանակի պայմաններն ի նկատի ունենալով՝ պէտք է կարծել, թէ այն ընդարձակ կալուածները եւ այն իշխանական դիրքը, որ ունէր նորա սերունդը եւ վայելում էր անկախ հայրապետական կոչումից, յանկարծակի ձեռք չբերուեցան, այլ տոհմական սեփականութիւն էր, եւ Լուսաւորիչ ինքը ծնուել էր իբրեւ մի հայ իշխանազն՝ տէր այդ սեփականութեանց:**



# ԼՈՌՈՒ ԳԱՎԱՌԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Էթնոժողովրդագրական գործընթացի ուսումնասիրության կարեւորությունը մինչեւ վերջերս չէր գիտակցվում մեր պատմագրության կողմից: Ի թիվս այլ գործոնների՝ դա պայմանավորված էր նաեւ նրանով, որ խորհրդահայ պատմագրությունը պարտադրված էր հայոց պատմության մի շարք հարցերում կաղապարվել անհեթեթ գաղափարական շրջանակներում: Մինչդեռ էթնոժողովրդագրական գործընթացների գիտական անաչառ վերլուծությունը, հատկապես, երբ խոսքը վերաբերում է ազգաբնակչության տեղաշարժերին, դրանց քաղաքական ու սոցիալ-տնտեսական նախադրյալներին, կարող է բանալի հանդիսանալ պատմական զանազան վիճելի եւ վիճարկելի թվացող հարցերի ճշմարտացի լուսաբանումը կատարելու համար:

Այս տեսանկյունից շատ կարեւոր եւ ուսանելի աշխատանք է կատարել ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող Հասմիկ Ամիրջանյանը, որի «Լոռին XVIII դարի վերջին եւ XIX դարի առաջին երեսնամյակին» խորագրով պատմաժողովրդագրական ուսումնասիրությունը վերջերս ներկայացվեց հայ ընթերցող հասարակայնության դատին: Ներածականում հեղինակը մատնանշում է, որ սույն թեման խիստ արդիական նշանակություն ունի, քանզի կարեւորվում է Լոռին վրացական պետության շրջանակներում տեղայնացնելուն ուղղված՝ վրաց պատմագիտության անհեթեթ փորձերին հակահարված տալու անհրաժեշտությունը: Աշխատությունը բաղկացած է երկու գլխից, առաջաբանից ու վերջաբանից, գրականության, անձնանունների ու տեղանունների ցանկից:

Առաջին գլխում («Լոռու գավառը XVIII դ. վերջին - XIX դ. առաջին երեսնամյակին») քննության են առնվում վերոնշյալ ժամանակաշրջանում Լոռու ժողովրդագրական տեղաշարժերին վերաբերող մի շարք խորքային հիմնահարցեր: Հեղինակը նախեւառաջ ճշտում է Լոռու աշխարհագրական սահմանները, հիմնավորում, որ «Լոռի» աշխարհագրկան տերմինն առաջին անգամ հիշատակվում է Դավիթ Անհողինի օրոք (996-1048 թթ.), երբ Գուգարքում կառուցվեց 12 ամրոց, այդ թվում՝ Լոռին:

Հեղինակի գիտական հավաստի փաստարկումները վկայում են այն մասին, որ Լոռին բոլոր ժամանակներում եղել է Հայոց աշխարհի ռազմաքաղաքական կարեւոր եւ կենսունակ միավորներից մեկը: Այս առումով հետաքրքրական է այն փաստը, որ դեռեւս 1699 թ. Իսրայել Օրու՝ Հայաստանի ազատագրության համար գործողությունների ծրագրում կարեւոր տեղ է հատկացված Լոռուն: Ըստ այդ ծրագրի՝ նշվում էին հայկական գավառները՝ զինվորներ տրամադրելու կարողության չափով, այդ թվում նաեւ՝ Լոռին, որտեղից նախատեսվում էր շուրջ 6000 մարդ: Լոռու նկատմամբ նկատելի շահագրգռություն է ցուցաբերել հեռավոր Մադրասում բնավորված հայ մեծահարուստ Շահամիր Շահամիրյանը, որն ակտիվ շփումների մեջ էր հայ եւ վրաց քաղաքական շրջանակների հետ:

Շատ կարեւոր է հետազոտողի այն դիտարկումը, որ վրացական տիրապետությունը չկարողացավ փոխել Լոռու տիպիկ հայկական էթնո-մշակութային պատկերը՝ հօգուտ վրացականի եւ մինչեւ 19-րդ դարի սկզբները գավառի բնակչությունը շարունակում էր մնալ գերազանցապես հայաբնակ:

Այս ամենի վերաբերյալ հեղինակի եզրակացությունները հիմնված են գիտական սկզբնաղբյուրների փաստառատ տվյալների հիման վրա, որն, ի դեպ, սույն աշխատության կարեւոր առավելություններից մեկն է:

Երկրորդ գլխում («Ժողովրդագրական գործընթացները Լոռու գավառում») գիտական օբյեկտիվ դիտարկումներով ու մոտեցումներով ներկայացվում է Լոռու գավառում 18-րդ դարի վերջերից մինչեւ 19-րդ դարի առաջին երեսնամյակն ընկած ժամանակամիջոցում ժողովրդագրական գործընթացների ճշգրիտ պատկերը, բազմակողմանիորեն բացահայտվում են վերոնշյալ գործընթացների սոցիալ-տնտեսական եւ քաղաքական ենթաշերտերն ու դրդապատճառները: Ըստ այդմ, լավագույնս քննության է առնվում արցախահայության՝ Լոռու գավառում վերաբնակեցման խնդիրը հայ-ռուս-վրացական հարաբերությունների խորապատկերի վրա: Հեղինակը Լոռու էթնիկ գործընթացներում մատնանշում է հետեւյալ ուղղությունները.

1. տեղաշարժեր, որոնք տեղի ունեցան Արեւմտյան Հայաստանի տարածքներից դեպի Լոռի եւ հակառակը (թաթարների գաղթ դեպի թուրքական սահմաններ),

2. երկրորդ խմբի տեղաշարժերը վերաբերում են Արեւելյան Հայաստանի տարբեր վայրերից դեպի Լոռի տեղի ունեցած տեղափոխություններին,

3. երրորդ ուղղությունը՝ Լոռու սահմանների շրջանակներում ընթացած տեղաշարժերն էին (բնակիչների տեղափոխություն Լոռու մի տարածքից մյուսը):



Վերոնշյալ տեղաշարժերի հետեւանքով տեղի է ունենում Լոռու բնակավայրերի բնակչության որոշ աճ՝ հայ բնակչության թվի համալրում: Լոռին վերաբնակեցնելու հարցում նկատելի շահագրգիռ վերաբերմունք է ցույց տալիս ցարական կառավարությունը՝ ի դեմս նրա տեղական վարչական եւ ռազմական պաշտոնյաների:

Հետազոտության հեղինակը ցարիզմի կողմից Լոռու վերաբնակեցման կարեւորությունն ու օգտակարությունը բացատրում է տարածքի սահմանամերձ գոտի լինելով, ուստի առաջնային էին դառնում ցարական իշխանությունների ռազմավարական նկատառումները, ինչպես նաեւ խիստ կենսական էր սույն նոր տարածքում հարկատու բնակչություն ունենալը, տեղի հանքերի շահագործումը, տնտեսական կյանքին զարկ տալու անհրաժեշտությունը: Սակայն վերաբնակիչների մի մասը, նոր բնակավայրերում մնալով լիովին անօգնական, զուրկ ապրուստի տարրական պայմաններից, ձգտում էր հեռանալ այլ վայրեր:

Աշխատության հեղինակի հիմնական եզրահանգումը հետեւյալն է. վերաբնակեցումների արդյունքում չխախտվեց Լոռու էթնոժողովրդագրական պատկերը: Լոռու գյուղերը, մինչեւ վերաբնակեցումը լինելով լիովին հայաբնակ, դրանից հետո էլ համալրվելով բացառապես հայ բնակչությամբ, պահպանեցին իրենց թվական գերակշռությունը եւ էթնոժողովրդագրական բնականոն պատկերը նաեւ հետագայում:

Պատմաբան Հասմիկ Ամիրջանյանի աշխատությունը կարդացվում է մեծ հետաքրքրությամբ եւ նախատեսված է ոչ միայն պատմաբանների, այլեւ ընթերցող լայն հասարակայնության համար:

*Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*
*Պատմական գիտ. թեկնածու*

# Էվթանազիա
## (բարոյական եւ քրիստոնեական մոտեցումներ)

*Սկիզբը՝ թիվ 6*

Էվթանազիան նաեւ ինքնասպանություն է, քանզի առկա է հիվանդի համաձայնությունը՝ մահով ավարտելու իր տառապալից կյանքը, կամ հենց ինքը կարող է անջատել կենսապահպան սարքը: Հետեւաբար էվթանազիան բարոյական-քրիստոնեական մոտեցման տեսանկյունից պետք է քննարկել՝ ինքնասպանության խնդրի ներքո:

Ս. Գրքում առկա են ինքնասպանությունների մի քանի դեպքեր: Փորձենք ավելի մանրամասն անդրադառնալ Աստվածաշնչում ինքնասպանության ամենահայտնի փաստին՝ Հուդայի ինքնասպանությանը: Հուդայի ինքնասպանության խնդիրը միշտ էլ եղել է աստվածաբանների ուշադրության կենտրոնում: Նրանք փորձել են բացատրել եւ հիմնավորել, իսկ վերջին շրջանում նույնիսկ արդարացնել Հուդայի արարքը: Բայց դրանք ընդամենը կարծիքներ են, քանզի դժվար է թափանցել Հուդայի ներքին աշխարհը, զգալ եւ ներկայացնել նրա ապրումները: Այդ մանրամասնություններին չանրադառնալով՝ հայացք ուղղենք Հուդայի ինքնասպանության մեղքին, որն ընդհանրություններ ունի մեր թեմայի հետ:

Հուդայի արարքը եւ առհասարակ ինքնասպանությունը մեծ մեղք է համարվում Աստվածաշնչում: Հիշենք, որ Ծննդոցի Թ 6 համարն ուղղակի հրահանգում է. «Ով թափի մարդու արյունը, նրա արյան փոխարեն թող թափվի իր արյունը, որովհետեւ Աստծո պատկերով եմ Ես ստեղծել մարդուն»: Այնուհետեւ տասնաբանյայի վեցերորդ պատվիրանն ասում է. «Մի՛ սպանիր» (Ելք Ի 13, Բ Օրենք Ե 17): Պատվիրանն իր մեջ բովանդակում է նաեւ ինքնասպանության մեղքը: Էվթանազիայի հակառակորդներն իրենց փաստարկների մեջ ներկայացնում են նախեւառաջ բարոյական-կրոնական հենց այս հրահանգը: Աջակցված մահը կամ էվթանազիան մարդկային կյանքի արժեքի գաղափարն է արտացոլում, որը խոր արմատներ ունի քրիստոնեական ավանդության մեջ: Այդ ավանդությունը կյանքն Աստծուց տրված պարգեւ կամ փոխառություն է համարում: Աստված է ստեղծել ամեն ինչ՝ ներառյալ մարդկային կյանքը, եւ բարի է հռչակել այն (հմմտ. Ծննդ. Ա 31): Մարդկային կյանքի վերաբերյալ այս տեսակետն առաջին հերթին նշանակում է, որ մենք պետք է փայփայենք այն եւ անենք ամեն ինչ՝ հանուն նրա պաշտպանության: Մեր կյանքը մեր սեփականությունը չէ. Աստված է մեր կյանքի սեփականատերը: Այս դեպքում մեր կամ ուրիշի կյանքի հետ վարվելու իրավունքները սահմանափակ են:

Գուցե վիճելի եւ անհավանական թվա, բայց հնարավոր է այնպիսի մի եվթադրություն, ըստ որի՝ Ադամի մեղքը ոչ այնքան արգելված ծառից ուտելն էր, քան այն, ինչ նա արեց հետագայում: Աստծո կատարած «հարցաքննությունն» ուղղված էր երկու մարդ-արարածների, բայց Տերն իրողությունը պարզելու նպատակ չէր հետապնդում: «Ի՞նչ արեցիր» հարցն Աստծո շուրթերում անիմաստ է, եթե դա ասվում է պարզելու համար տեղի ունեցածը: Մարդկանց մտքերը կարդացող Աստված, անշուշտ, գիտեր կատարվածը: Հարցի էությունն այն է, որ դրանով Աստված մեղքերը քավելու հնարավորություն տվեց Ադամին. եթե նա ոչ միայն խոստովաներ իր մեղքը, այլեւ դրանով իր իսկ վրա վերցներ ողջ պատասխանատվությունը, ապա դա սիրով թելադրված ինքնազոհաբերում կլիներ: Այդ դեպքում Ադամը, իմանալով հանդերձ, որ իրեն մահ է սպասվում, կվերականգներ մարդու մեջ Աստծո պատկերը եւ չէր դատապարտվի տաժանքի եւ մահվան. չէ՞ որ Եվային փրկել կնշանակեր կյանք փրկել: Բայց Ադամն իր անձը հարվածի տակ չդնելու համար ասաց. «Այս կինը, որ տվեցիր ինձ, նա՛ տվեց ինձ ծառի պտղից, եւ ես կերա» (Ծննդ. Գ 12):

Ահա այստեղ էլ հանդիպում ենք մատնության առաջին դեպքին: Թեեւ այդպես էր եղել, ինչպես որ ասաց Ադամը, բայց միեւնույն է՝ նրա արածը մատնություն էր: Տերը հարցնում էր Ադամին իր արածի մասին, մղում էր նրան զղջման, ոչ թե մատնության:



Հուդան էլ սուտ չէր ասել Կայիափայի գործակալներին, բայց նրա «ճշմարտությունը» մատնություն էր: Այստեղ ընդհանրություն կարելի է տեսնել Աստծո՝ Ադամին ուղղված հարցի եւ Քրիստոսի՝ Գեթսեմանիի պարտեզում ձերբակալության պահին Հուդային ուղղված հարցի միջեւ՝ «Հուդա՛, համբուրելո՞վ ես մատնում մարդու Որդուն» (Ղուկ. ԻԲ 48): Ընդհանրությունը տրված հարցերի էության մեջ է. հնարավորությունը՝ ուղղելու գործած սխալները:

*Շարունակությունը՝ էջ 8*

# Էվթանազիա



*Սկիզբը՝ էջ 7*

Տվյալ դեպքում սա նշանակում է, որ նրանց մատնության մեղքը ներելի էր: Ուրեմն, մասնավորապես անդրադառնալով Հուդային՝ ասենք, որ նրա աններելի մեղքը ոչ թե մատնությունն էր, այլ այն, ինչ հետո նա արեց, որն էլ համարվեց աստվածհայհոյություն:

Աստվածհայհոյության աններելիության մասին Քրիստոսն ասաց. «Դրա համար ասում եմ ձեզ. ամեն մեղք եւ հայհոյանք կներվեն մարդկանց, բայց Հոգու դեմ հայհոյանքը չպիտի ներվի: Եվ ով որ մարդու Որդու դեմ խոսք ասի, նրան պիտի ներվի, բայց ով ասի Սուրբ Հոգու դեմ, նրան չպիտի ներվի ո՛չ այս աշխարհում եւ ո՛չ էլ հանդերձյալում» (Մատթ. ԺԲ 31-32):

Նշված մտքի այսպիսի ձեւակերպումը Մատթեոսի Ավետարանում նշանակում է, որ ներվում է ըմբոստացումը միայն մարդու նկատմամբ, անգամ եթե նա մարդեղացած Աստված է: Բայց ինչո՞ւ է Հիսուսը շեշտում Սուրբ Հոգուն եւ ոչ թե պարզապես Աստծուն (Հայր, Որդի) ուղղված հայհոյության աններելիությունը: Այստեղ կա հետաքրքրական եւ կարեւոր մեկնաբանություն, որը բացահայտում է ինքնասպանության աններելիության ամբողջ էությունը. Ավետարանի Սուրբ Հոգին դա Հին Կտակարանի Աստծո Հոգին է, որն արարչությունից առաջ շրջում էր ջրերի վրա (հմմտ. Ծննդ. Ա 2): Հենց Նա էլ դարձավ մարդու կյանքի աղբյուրը. Աստված մարդ ստեղծելիս «նրա դեմքին կենդանության շունչ փչեց, եւ մարդն եղավ կենդանի էակ» (Ծննդ. Բ 7): Մարդու հոգին աստվածային է, հետեւաբար մարդն իշխանություն չունի նրա վրա, քանզի Աստված այդ իշխանությունը չի տվել: Ուրեմն, աններելի մեղք է համարվում հայհոյությունն ուղղված Ս. Երրորդության այն Անձի դեմ, Ով կենդանություն պարգեւեց մարդուն արարչության ժամանակ, իսկ դա Սուրբ Հոգին է: Սուրբ Հոգուն ուղղված հայհոյությունն Ավետարաններում համարվում է մահվան ընտրություն: Եթե հայհոյությունն Աստծո՝ Ս. Հոգու դեմ նույնն է, ինչ մահվան ինքնակամ ընտրությունը, ապա ինքնասպանությունը, մահվան ինքնակամ ընտրություն լինելով, դառնում է հայհոյություն կյանք պարգեւողի՝ Ս. Հոգու դեմ: Սրանով է բացատրվում, թե ինչու ներելի են բոլոր մեղքերը, բացի ինքնասպանության մեղքից: Այն ամենասարսափելի մեղքն է Աստծո դեմ, Ս. Հոգու դեմ ուղղված հայհոյանք՝ ծանր, անչափելի ու աններելի: Ահա այստեղ է, որ կփորձենք մի շատ կարեւոր հարցադրում անել՝ թերեւս առանց պատասխանի. ինքնասպանության կողմով էֆթանազիան մի՞թե աններելի մեղք չէ, ի՞նչով է տարբերվում Հուդայից այն հիվանդը, ով դիմում է էֆթանազիայի:

Քրիստոնեական պատկերացմամբ՝ կյանքի իմաստն այս աշխարհի հետ չի կապված: Բարոյագիտության իդեալիստական ուղղություններից մեկը՝ հեդոնիզմը, դավանում է, թե հաճույքը կյանքի ամենամեծ բարիքն է, գերագույն նպատակը (տե՛ս **Фромм Э.**, Бегство от свободы, Минск, 2000, էջ 389, հետայսու՝ Бегство от свободы): Այդպիսի մտածելակերպը սահմանափակվում է միայն այս աշխարհի գոյության համոզմամբ, իսկ հանդերձյալ կյանքի գոյության հնարավորության մասին խոսք լինել չի կարող: Բայց անբուժելի հիվանդը պետք է պատրաստվի ոչ թե մահվան, այլ հավիտենական կյանքի: Հենց այս հավիտենական կյանքի նկատմամբ հավատի բացակայությունն է նաեւ, որ հուսահատություն է առաջացնում: Կյանքի իմաստի գիտակցումը կապված է կյանքի նպատակի հետ. եթե գոյություն չունի հավիտենական կյանք, ապա կյանքի գերագույն նպատակը հաճույքներն են:

Հոգու անմահությունը հաստատում է հավիտենական կյանքի գոյությունը: Այս մոտեցմամբ՝ մարդու կյանքն այս ժամանակավոր աշխարհով չի սահմանափակվում, եւ նրա կյանքի նպատակը դառնում է հոգու փրկությունը, այն հավիտանական կյանքին արժանի դարձնելը: Ուրեմն ինքնասպանությունը դառնում է անգիտակից արարք, որը ժխտում է հավիտենական կյանքի իրականությունը: Ն. Բերդյաեւն ասում է, որ այն, լինելով աստվածային եւ մարդկային օրենքների խախտում, առաջացնում է սարսափելի, համարյա գերբնական զգացողություն՝ հանդիսանալով բռնություն ոչ միայն կյանքի, այլեւ մահվան վրա:

Յուրաքանչյուր մարդու կյանք երկրի վրա ընթանում է Աստծո նախախնամությամբ. արարածն իրավունք չունի միջամտելու Արարչի գործերին եւ դադարեցնելու մի կյանք, որի գործարկումը միայն Ամենաբարձրյալին է վերապահված: Չնայած բոլոր մարդիկ բնական ծնունդով ծնողներից են առաջանում, սակայն Աստված է յուրաքանչյուր մարդու արարիչը: Մահկանացուն չի կարող ծնել անմահ հոգի. հոգին աստվածային է: Տերն արարման պահին օրհնեց ու ասաց. «Աճե՛ցե՛ք եւ բազմացե՛ք եւ լցրե՛ք երկիրը...» (Ծննդ. Ա 28): Հետեւաբար մարդն ամեն գնով պետք է փայփայի Աստծո՝ մարդուն տված գերագույն պարգեւը՝ կյանքը՝ անսալով աստվածաշնչյան պատգամին. «Ձեր կյանքի մոլությամբ ձեզ մահ մի՛ ցանկացեք եւ մի՛ սպանեք ձեր անձերը՝ ձեր իսկ ձեռքերի գործերով» (Սողոմ. Ա 12):

«Հարկավոր է ամբողջ ուժով ձգտել ապրել, նույնիսկ եթե այն շատ քիչ բան է հիշեցնում իրական կյանքի մասին»,- ասում է Անտոն Սուրոժսկին (**Митрополит А. Сурожский**, Жизнь, болезнь, смерть, Клин, 2001, էջ 56-57): Աստված կարեւորում է յուրաքանչյուր առանձին մարդու՝ նրա մեջ տեսնելով այն անծայրածիր արժեքը, որ Տիրոջ համար քննարկման ենթակա չէ: Այնպես է ծրագրվել, որ մեկ մարդու կյանքը հավասարազոր է ողջ աշխարհի գոյությանը, այն աշխարհի, որն ստեղծվել է ընդամենը որպես մարդու բնակավայր:

Ուղղափառ եւ Կաթոլիկ եկեղեցիների աստվածաբանության մեջ ասվում է, որ եթե հոգին առաջանար սաղմից, որից եւ առաջանում է մարմինը, ապա նրանք միասին էլ կմեռնեին (**Кант**, Метафизические начала естествознания, М., 1992, էջ 1289): Հոգին անմահ է. նրա վրա մահկանացու մարդն իշխանություն չունի: Տիրոջն է կյանքի եւ մահվան իշխանությունը (հմմտ. Իմաստ. Սողոմոնի ԺԶ 13): Եթե մարդն իր կյանքի տերը լիներ, ապա մի՞թե չպիտի կարողանար տնօրինել այն այնպես, որ հասներ գերագույն երջանկության: Բայց մարդու՝ այս աշխարհի վրա ընթացքն այդ երջանկության անվերջ ու անբավարար ձգտում է: Գերագույն երջանկությունը կարող է իրականանալ միայն հավիտենական կյանքում, քանզի դրա աղբյուրը միայն Աստված է: «Երբ մարդը կը սնուցանէ երջանկութեան եւ կատարելութեան բաղձանքներ, կը նշանակէ, որ սահմանուած է երջանկութեան ու կատարելութեան, եւ քանի որ անոնց չի կրնար տիրանալ երկրի վրայ, ինքնին կը հետեւի, որ պիտի տիրանայ անոնց անդենականի մէջ. այսինքն Աստուծոյ արքայութեան մէջ»,- ասում է Շնորհք եպիսկոպոս Գալուստյանը (Շնորհք եպիսկոպոս Գալուստեան, Տեղիք Աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1993, էջ 76):

Եվ վերջապես, եթե մարդն իշխանություն ունենար իր կյանքի նկատմամբ, ապա ինչո՞ւ նրան հայտնի չէ իր մահվան օրը. որովհետեւ նա չէ հոգու արարիչը. «Մահը մարդու համար հանգիստ է, սակայն ճամփան դեպի այն ծածկվեց նրանից. փակեց նրա շուրջը Ինքը՝ Աստված» (Հոբ Գ 22-23):

Էվթանազիայի հարցը քննարկելիս առաջ են գալիս նաեւ մարդու ազատ կամքին առնչվող կենսական հարցեր, որոնք հատկապես բարոյական-կրոնական դաշտում լուծում են պահանջում: Ոմանց կարծիքով՝ էվթանազիան մարդկանց ազատություն է տալիս: Ջոն Ստյուարտ Միլլն իր «Ազատության մասին» գրքում պնդում է, որ ուրիշներին չառնչվող հարցերում անհատը պետք է լիակատար անկախություն ունենա: Նա իշխանություն ունի իր մարմնի վրա՝ կյանքին վերաբերող հարցերում, եւ նույն ազատությունը պետք է ունենա մահվանն առնչվող խնդիրներում: Կամքի ազատությունը բացարձակեցվում է նաեւ սցիենտիկ (գիտական) մտածելակերպի համաձայն, որի կողմնակիցները ժխտում են Աստծո գոյության հնարավորությունը՝ ամբողջ տիեզերքի գոյությունը բացատրելով պատահականությամբ: Սա նրանց հիմք է տալիս մարդուն իր դատավորը համարելու՝ իրեն առնչվող բոլոր հարցերում, ներառյալ՝ կյանքի եւ մահվան:

Ահա վերը նշված մոտեցումներն են, որ կրոնական-բարոյական տեսանկյունից վեր են հանում մարդու բարոյական պատասխանատվության խնդիրը՝ ոչ թե արդեն մարդկանց, այլեւ Աստծո նկատմամբ: Մարդու ազատությունը սերտորեն առնչվում է բարոյական պատասխանատվության հետ Նրա հանդեպ, Ով պարգեւել է այդ ազատությունը:

*Շարունակելի*

***Ժորա սրկ. ՍԱՐԳՍՅԱՆ***

# ԿԱԼԿԱԹԱՅԻ ՃԵՄԱՐԱՆԸ 190 ՏԱՐԵԿԱՆ Է



2011 թվականի ապրիլի 2-ին Կալկաթայում նշվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո գործող Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 190-ամյակը:

Բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի կրթական տնօրենը: Այնուհետեւ ելույթ ունեցան Մարդասիրականի պարախումբն ու երգչախումբը: Ապա 2010-2011 ուսումնական տարվա շրջանավարտներին հանձնվեցին ճեմարանի անունը կրող ժամացույցներ, իսկ բարձր առաջադիմություն ունեցող աշակերտները պարգեւատրվեցին գովասանագրերով եւ ստացան խրախուսական նվերներ:

Հանդիսության ընթացքում ցուցադրվեց Հնդկահայքի երեւելիների եւ հայ-հնդկական հարաբերությունների մասին պատմող տեսանյութ: Հանդիսության բարձրակետը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Կալկաթայում լույս տեսած «Հնդկահայք» երկլեզու (հայերեն-անգլերեն) երկրորդ տարեգրքի ներկայացվելն էր: Գրքի հիմնադիր-հրատարակիչը հնդկահայոց հոգեւոր հովիվ, Մարդասիրականի կառավարիչ Խորեն աբեղա Հովհաննիսյանն է: «Հնդկահայք» 2010-ում խտացել են հնդկահայոց հոգեւոր հովվության եւ Մարդասիրական ճեմարանի անցուդարձը, շնորհալի ուսանողների ուսումնական ու մարզական նվաճումները: Տարեգրքում տեղ են գտել հնդկահայ համայնքի հարյուրամյակների պատմությունը լուսաբանող հոդվածներ, ինչպես նաեւ աշխարհի տարբեր ծագերից անդրանիկ հրատարակությունը գնահատող եւ արժեւորող նամակներ, որոնք պարտավորեցնող էին եւ խթան «Հնդկահայք» 2010-ը կյանքի կոչելու գործում: Ձեռնարկին ներկա էին ճեմարանի աշակերտությունը, ուսուցիչները, պաշտոնեությունը, Սուրբ Նազարեթ Մայր եկեղեցու վարչության անդամները, համայնքի ներկայացուցիչներ եւ հյուրեր:




Հայոց մարդասիրական ճեմարանը հիմնադրվել է 1821 թվականի ապրիլի 2-ին՝ Աստվածատուր Մուրադխանյանի եւ Մնացական Վարդանյանի բարերարությամբ: Կրթօջախը Կալկաթայի երկրորդ ամենահին դպրոցն է:

Հանդիսությունը հարգանքի տուրք էր դպրոցի հիմնադիրների պայծառ հիշատակին:

***Հայոց մարդասիրական ճեմարան***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝**
**qh@etchmiadzin.am**

Ստոր. տպագր.
15.04.2011 թ.

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**